

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՄԸ ՈՐ ՊԻՏԻ ԳԱՐ ՈՐՈՇԱՊԵՍ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԱՅԼԱՊԵՍ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՆԵՐՔԻՆ ՓՏԱԽՏԸ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Վկաներն այս անգամ, Ազգային ժողովի նախագահն ու «Օրինաց երկիր» կուսակցությունն են: Ընթացիկ, Մայիս ամսուան մեջ, հայրենի երկնակամարի տակ, «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Պաղտասարեանի անուն շուրջ շրջող գրոյցները վերջապէս պաշտօնակամանակով, քիւրեղացան:

Այս շաբաթասկզբին, երկուշաբթի 23 Մայիս 2006-ին, Ազգային ժողովի առաջին նիստին, Ա.Ս. Նախագահ Ա. Պաղտասարեան, պաշտօնակամանակները իր հրաժարականը: Յայտնեմք նաև, որ Ազգային ժողովն անհրաժեշտ է հարկադրաբար կոչում էր կուսակցությունը դուրս եկաւ, այսպէս կոչում էր, իշխանամէտ խորհրդարանական համախմբումի շարքերէն: Այսօր երեք տարիէ, Քոչարեանի անձին ու անփառունակ իշխանութեան շուրջ հատուածական շահերով համախմբում կուսակցություններու համախմբումը, փաստօրէն, ձախողած էր իր առաջնութեան մէջ:

Երկրի թիւ 2 դեկամբարը կը գտնէր, թէ երկիրը ինքնին իր սահմաններէն ներս չէր կրցած պաշտպանել մարդկային տարրական իրաւունքները: Հայրենաբնակ քաղաքացին մշտապէս ենթակայ կը մնար անիրաւութիւններու, անարդարութիւններու, խտրական վերաբերմունքներու, կաշտակերութեան: Քաղաքացին կ'ապրէր մշտապէս վախի և անստուգութեան մթնոլորտի մէջ: Թերի էին առողջապահական պայմանները, որոնք բարձր կը պահէին մահացութեան տոկոսային համեմատութիւնը:

Այս դժիւբաժ, ննչիչ ու անհեռանկարային վիճակը, մարդ անհատի ներսիդին կը տարածէր ՎԱԽԻ զգացում: Կը պատճառէր յուսահատութիւն: Ան կը սահմանափակէր նախաձեռնութեան ոգին: Նաև, արգել կը հանդիսանար ծննդաբերութեան: Կը քաղաքներ երկրէն հեռացումը դէպի օտար ափեր, երկիրներ, ուր իրենց կը սպասէին, անկասկած, տխուր անակնկալներ:

Պաղտասարեան, հիմնուելով միջազգային կազմակերպութիւններու՝ Հայաստանի մասին կատարած ուսումնասիրութիւններու եզրակացութիւններուն վրայ, դիտել կու տայ, թէ «2050 թուականին, Հայաստանում կը մնայ 500 հազար մարդ, եթէ ծնելիութեան եւ մահացութեան ներկայ տեմպը շարունակուի, պետութիւնը օգնութեան չգայ երիտասարդ ընտանիքներին, ինչպէս որ

ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԻՐ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԱՐԹՈՒՐ ԲԱՂՊԱՍԱՐԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ «ՎԱԽԻ ԸԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶՊԵՏԷ Է ԼԻՆԻ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ»

Երկուշաբթի, Մայիս 22-ին Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանը պաշտօնակամանակները իր հրաժարականը:

Այս առթիւ Խորհրդարանին առջեւ ելոյթ ունենալով Բաղդասարեան շորհակալութիւն յայտնել բոլոր 131 պատգամաւորներուն՝ անկախ անոնց քաղաքական հայեացքներէն եւ վերջին օրերու քաղաքական իրադարձութիւններու կապակցութեամբ անոնց վերաբերմունքէն ու դիրքորոշումներէն: Ապա ան անդրադարձաւ Հայաստանը յուզող շարք մը հարցերու:

«Մենք գնում ենք մեր երազած Հայաստանը կառուցելու ճանապարհով: Գտնում ենք, որ ժողովրդավարական բարեփոխումները պէտք է աւելի վճռական առաջ մղուեն, որ մարդու իրաւունքների պաշտպանութիւնը, կոռուպցիայի եւ կլանային տնտեսութեան դէմ պայքարը պէտք է հռչակուի քաղաքական առաջնահերթութիւն, ձեռնարկներ ձեռք բերուին: «ձեռք բերուին էլ լանտում» արատաւոր երեւոյթի դէմ պէտք է մղուի քաղաքական պայքար: Մենք գտնում ենք, որ ՀՀ ապագան պէտք է լինեն ժողովրդավարութիւն ու ազատութիւն, ոչ թէ

վախի հասարակութիւնը: Մենք վստահ ենք, որ չպէտք է կառուցել երկու Հայաստան. Երեւանը եւ մարզերը: Մենք գտնում ենք, որ ԵՄ հետ յարաբերութիւնների հետեւողական խորացումը պէտք է դառնայ քաղաքական նպատակ: Որ երատրանտեան համագործակցութեան խորացումը մեր ապագայ համար կարեւորագոյն եւ ճիշդ մօտեցում է, որ մենք պէտք է խորացնենք հայամերիկեան քաղաքական եւ տնտեսական համագործակցութիւնը», յայտարարեց Ազգային ժողովի հրաժարեալ նախագահը:

«Սոցիոլոգիական հարցումները ցոյց են տուել, որ Հայաստանի հասարակութեան 70 տոկոսը վախեցած է, մենք պայքարելու ենք վախի հասարակութեան դէմ, պայքարելու ենք ազատ հասարակութեան համար», - իր ելոյթին մէջ ըսաւ Բաղդասարեան ու աւելցուց «Եթէ ծնելիութեան եւ մահացութեան ներկայ տեմպերը պահպանուեն, նոյնիսկ այն պարագայում, որ Հայաստանից այլևս ոչ ոք «խոսան» չզնայ, 2050 թուականին կը մնայ 500 հազար մարդ»:

Արթուր Բաղդասարեանի ելոյթը

ԹՈՒՐՔԻԱ ԴԱՐՁԵԱԼ ԴԺԳՈՐ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ



Արդարութիւն պահանջող ցուցարար մը Ֆրանսայի Ազգային ժողովի շէնքին առջեւ

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութիւնը դժգոհութիւն յայտնած է այն կապակցութեամբ, որ Ֆրանսայի Ազգային ժողովը միմիայն յետաձգած է Հայոց Ցեղասպանութեան հերքումը քրէական յանցանք նկատող օրինագծի քուէարկութիւնը:

Մայիս 18-ին Ֆրանսայի Ազգային ժողովը քննարկելով Հայոց Ցեղասպանութիւնը հերքելու համար քրէական պատիժ սահմանող օրինագիծը, քուէարկութիւնը յետաձգած էր անորոշ ժամանակով:

Պաշտօնական Անգարան թէնզտ է, որ օրէնքը Հաստատուեցաւ, սակայն, միւս կողմէ խիստ դժգոհ է պահանջելով ընդհանրապէս հանել հարցը Ֆրանսայի Խորհրդարանի

ՀԱՅ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆԵՐՈՒ ԶՈՐ ԴԱՐՁԱԾ ԵՆ



Կլէմտէլ կեդրոնական նամակատան առջեւ տեղի ունեցած մամուլային ասուլիսը

Երեքշաբթի, Մայիս 23-ին Կլէմտէլ քաղաքի կեդրոնական նամակատան առջեւ տեղի ունեցած մամուլային ասուլիսի մը ընթացքին տեղեկութիւններ փոխանցուեցան այն մասին, որ բազմաթիւ հայերու անուշտով ի բացակայութեան՝ նամակով քուէարկելու կեղծ դիմումներ գաղտնի են Լոս Անճելըս Գաւառի Ընտրական Արձանագրութիւններու Գրասենեակը:

Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի 43-րդ ընտրաշրջանի դեմոկրատ թեկնածուներէն Ֆրանք Քինթրոյի ընտրական գրասենեակին կողմէ հրաւիրուած մամուլային ասուլիսի մը ընթացքին ելոյթ ունենալով, գրասենեակի փաստաբանը յայտնեց որ, Ընտրական Արձանագրութիւններու Գրասենեակը

12 ՀԱՅԵՐ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ԵՆ ՏԻԹՈՅԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՇՐՋԱՓԱԿԵՆ ՆԵՐՍ



Նախնական օգնութիւն տուած հայապարմանուհիին

Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեանի կողմէ հրապարակուած յայտարարութենէ մը կը տեղեկանանք որ, Կիրակի, Մայիս 21-ի Տիթրոյթի հայկական եկեղեցւոյ շրջափակին մէջ պատահած դէպքի մը ընթացքին վերաւորուած են 12 հոգիներ:

Արդարեւ, այն պահուն երբ տեղի կ'ունենար Մարի Մանուկեան վարժարանի տարեկան տօնահանդէսը, «Մինի վէն» ինքնաշարժ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ԿԱՍ ԱՆԿԱՌԱՎԱՐԵԼԻ ԾԳՆԱԺԱՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Մենք արդեն առիթներ ունեցել ենք յիշատակելու, որ Ռոբերդ Քոչարեանը վերջերս առանց իրական պատճառաբանության մերժել է ՆԱՏՕ-ի առաջարկությունները՝ Մալիսի վերջին հանդիպել իհրամ Ալիևի հետ՝ ստորագրելու կամ առնուհանդերձ քննարկելու կարգադրման նոր տարբերակ: Նրա չմեկնելու դրդապատճառները հասկանալի են. մի կողմից առկա է «ուղղամասնական դաշնակցի» բացասական վերաբերմունքը կարգադրումների այս կամ այն «արագագործ» տարբերակների վերաբերեալ, միևս կողմից ՀՀ նախագահը իրաւացիորէն մտավախութիւն ունէր, որ փարիզեան հանդիպումը կարող էր դառնալ դարաբաղեան «Քեմի Դեվիդ»:

Իրօք, որ մրցակցութեան սրութիւնը Հարաւային Կովկասում շատ ուժգին է: Այսպէս, Ռուսաստանում աշխարհաքաղաքական խնդիրների ակադեմիայի փոխնախագահ զենեալ Լեոնիդ Իվաշովի կարծիքով, Իրանում «զինուած հակամարտութեան հաւանականութիւնը բաւականին բարձր է: Իրան ներխուժելու եւ հարուածներ հասցնելու օպերացիան արդէն սկսուել է... Այսօր «իրանական Ատրայէճանում» գործում են ամերիկեան յատուկ ստորաբաժանումները»:

«Որոշ փորձագէտներ ասում են, որ ամերիկացիները խրուել են Իրաքում, ուր որոշ բաներ թարս են ստացուել, եւ այս պատճառով չեն յարձակուի Իրանի վրայ: Կարծում եմ՝ իրավիճակն ամենեւին էլ այդպիսին չէ: Իրաքեան արշաւում գլխաւոր նպատակը նաւթն էր եւ վերահսկողութիւնը այնպիսի առանցքային կէտերի վրայ, ինչպիսիք են Բաբ-էլ-Մանդեբի եւ Օրոմուկի նեղուցները եւ այլն: Այդ նպատակին նրանք հասել են, եւ խանգարողը Իրանն է: Իրաքը նրանք գաւթել են, եւ եթէ գաւթեն Իրանը, ապա կը ստանան կապիտական նաւթը եւ կը վերահսկեն նաւթի համաշխարհային պաշարների 40 տոկոսը... Յանուն այդ նպատակի, ԱՄՆ-ն կը գնայ ամէն ինչի, այդ թւում եւ միջուկային սպառազինութեան կիրառմանը»:

Այսինքն, ըստ գեներալ Իվաշովի, մեր տարածաշրջանում ընթացող մեծ խաղի խաղագումարը չափազանց բարձր է՝ աշխարհի նաւթի շուրջ 40 տոկոսը, ինչը նշանակում է, որ ամերիկացիները կը դիմեն ցանկացած քայլի, կը կիրառեն ցանկացած ճշուում, միայն թէ ապահովեն սեփական ռազմական ներկայութիւնը Իրանից Հիւսիս:

Ի դէպ, կոնկրետ դարաբաղեան հարցում իրադարձութիւնների կտրուկ արագացման մասին է վկայում այն, որ Յունիսի 4-6-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում նախատեսուած է Հայաստանի եւ Ատրայէճանի նախագահների հանդիպումը «Սեւ ծովը որպէս գործընկերութեան եւ երկխօսութեան գոտի» գազաթնափողովի շրջանակներում: Իսկ մինչ այդ տարածաշրջան են ժամանելու ոչ միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր 3 համանախագահները, այլեւ իրենց հետ բերելու են Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի փոխարտգործնախարարներին: Դա վկայում է, որ ամերիկացիները մոթելիզացրել են բոլոր դիւանագիտական ռեսուրսները, որպէսզի Քոչարեանին եւ Ալիևին մի սեղանի շուրջ նստեցնեն ու փորձեն

պարտադրել ինչ-ինչ փաստաթղթի ստորագրում, որը թույլ կը տայ արդէն ամուսն ընթացքում հակամարտութեան գոտի խաղաղապահութեան տակ մտցնել ամերիկեան ռազմական ուժ: Ի դէպ, արդէն իսկ շրջանառու էն արտահոսքեր, որ Սպիտակ տունը մտադիր է փոխել Հայաստանի հետ առնչուած իր ամբողջ դիւանագիտական կորպուսը՝ սկսած Մեթիւ Բրայգայով, վերջացրած Ջոն Էվանսով, այն բանի համար, որ վերջին-

Քոչարեանն անվերջ չի կարող «չորով» մերժել «կարգադրման պատուհանը» օգտագործելու պարտադրանքները

ներս փաստացի ամբողջովին տապալել են «էվոլյուցիոն ճանապարհով» Քոչարեանի ռեժիմը ամերիկեան ձեռնասուն սարքելու ցանկացած հարաւորութիւն: Դժուար չէ նաեւ կուսել, որ առաջիկայում ամերիկացիները իրենց նպատակներին հասնելու համար նաեւ գործի կը դնեն կոմպրոմիսներ ընդդէմ հայկական իսթեբլիշմենթի:

Պարզ է, որ Քոչարեանն անվերջ չի կարող «չորով» մերժել «կարգադրման պատուհանը» օգտագործելու պարտադրանքները, եւ բարձր է հաւանականութիւնը, որ ճշուումները չէզոքացնելու համար նա պարզապէս հարկադրուած լինի շրխկոցով փակել 2006-ի «հարաւորութիւնների պատուհանը»:

Իսկ դա հնարաւոր է միայն մի դէպքում. եթէ Հայաստանում ստեղծուի անյապաղ հանդուցալուծում պահանջող ներքաղաքական ճգնաժամ: Ճիշդ է, Արթուր Բաղդասարեանի հրաժարականը եւ ՕԵԿ-ի՝ կոալիցիայից դուրս գալը ընդդիմութեան մի մասը արդէն իսկ համարում է սուր ճգնաժամի առկայութեան ակնյայտ ու անվիճելի ապացոյց, սակայն սոսկ այդ փաստը դժուար թէ բաւարար լինի, որպէսզի Արեւմուտքին ասուի, թէ Հայաստանում դարաբաղեան կարգադրումը բացառող ներքաղաքական ճգնաժամ է մոլեգնում: Ըստ էութեան, նոյն Ռոբերդ Քոչարեանին այժմ իրօք անհրաժեշտ է ճգնաժամը, եւ այլ հարց է, թէ ինչքանով այդ ճգնաժամը կարող է լինել կառավարելի: Առաջին փուլում միզուցէ բաւարար լինեն այնպիսի միջոցները, ինչպիսիք են, ասենք, արտգործնախարարի հրաժարականը:

Սակայն հետագայում ճգնաժամային իրավիճակը պահպանելու համար դժուար թէ հնարաւոր լինի եռյա գնալ առանց արտահերթ ընտրութիւնների: Իսկ արտահերթ ընտրութիւնները կարող են լինել նախագահական եւ խորհրդարանական: Պարզ է, որ նախագահական արտահերթ ընտրութիւնները այն ծայրայեղ քայլն է, որին Ռոբերդ Քոչարեանը կարող է դիմել, եթէ այլեւս սպառուեն բոլոր միջոցները կանխելու դարաբաղեան «Քեմի Դեվիդը»:

Ուստի ՀՀ նախագահի համար ելք կարող է լինել խորհրդարանական ճգնաժամը, որն աւարտուում է Աժ-ի լուծարումով: Դրա որոշակի նախադրեալները կան. այսպէս, կանխատեսուածներ կան, որ 5 օր անց, երբ Արթուր Բաղդասարեանը կը վերահաստատի իր հրաժարականը,

ԾԱՌԱՅԵՑԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ՝ ՔՆԻՐ ՀԱՆԳԻՍ

Մօտ երկու շաբաթ հրապարակած առաջին 1000 հարկատուների ցուցակը (2006-ի առաջին երեք ամիսների կտրուածքով) հետաքրքիր է, բնականաբար, այնտեղ հանդիպող յայտնի անուններով: Առաջին տեղերում տեսնում ենք նաեւ տեղական մասնաւոր բիզնեսի ներկայացուցիչներին («Ֆլէշ»՝ 4-րդ տեղ, «Քաղպետրոլ սերվիս»՝ 5-րդ, «Պարես Արմենիա»՝ 6-րդ, «Գրանդ տաբակ»՝ 9-րդ, «Ինտերնէշնլ Մասիս Տաբակ»՝ 11-րդ), եւ անկախ այդ բիզնեսների տէրերի քաղաքական կողմնորոշումներից եւ ընկերական շրջապատից՝ բարձր հարկեր մուծելը յարգանքի է արժանի:

Բայց ինչն է հետաքրքիր. խոշոր հարկատուների շարքերում չկան գործող եւ ստեղծուող կուսակցութիւնների ղեկավարներ եւ անդամներ: Օրինակ, շատ համեստ են վերջերս ՕԵԿ-ից փախած բիզնեսմենների ցուցանիշները՝ Դերժավայի Արկալ (66-րդ տեղ), ՄԱՊ-ի Արտակ (137-րդ), Կովալի Սամօ (337-րդ): Դժուար թէ դա պատահականութիւն լինի:

Գործարար պատգամաւորները մուծում են «Օրինաց երկրին» ամենեւին ոչ այն պատճառով, որ մեծ բարերարներ են: Սովորաբար բարեգործութիւնը ծածուկ չեն անում: Մնացած դէպքերում ոչ մի գործարար (եթէ, իհարկէ, հոգեբուժարան գնալու թեկնածու չէ) չենց այնպէս որեւէ տեղ սխտեմատիկ մուծումներ չի անում: Իզուր են

նր, եւ կը մեկնարկեն Աժ խօսնակի ընտրութիւնները, կարող են ի յայտ գալ որոշակի բարդութիւններ, եւ տեւական ժամանակ ոչ մի թեկնածու չկարողանայ ընտրուելու համար բաւարար ձայներ հաւաքել: Դրան էլ ակելի նպաստում է այն, որ արդէն իսկ լուրեր կան, թէ ՀՀԿ-ի ներսում չկայ միակարծութիւն թեկնածուի վերաբերեալ. դա լինի Տիգրան Թորոսեանը, թէ Գալուստ Սահակեանը:

Անշուշտ, քանզի պատգամաւորների մեծամասնութիւնը սոսկ «կոճակ սեղմող» կամակատարներ են, ամենեւին էլ դժուար չէ արհեստականորէն ստեղծել խորհրդարանական ճգնաժամ եւ ստանալ առիթ Աժ-ն լուծարելու (ակելի շուտ՝ Աժ-ի ինքնալուծարուելու) համար: Բայց այդ ամէնում կայ մի կարեւոր հանգամանք:

Բայց խոշոր հաշուով, Ռոբերդ Քոչարեանին դժուար թէ ձեռնտու լինի հենց հիմա անցկացնել Աժ արտահերթ ընտրութիւններ, քանզի այդ դէպքում հիմնական շահողը կը դառնայ հենց Սերժ Սարգսեանը, որը հետեւաբար օբիեկտիւօրէն շահագրգռուած է, որ խորհրդարանը ձեւաւորուի հնարաւորինս շուտ: Այդ դէպքում Աժ-ում կը լինի ոչ թէ Ռոբերդ Քոչարեանի համար յոյժ ցանկալի «կարկատանային մեծամասնութիւն», այլ յստակ մեծամասնութիւն կ'ունենայ Սերժ Սարգսեանը՝ ՀՀԿ-ով եւ որոշ արբանեակներով հանդերձ: Այդ դէպքում, նա թերեւս դառնայ Ռոբերդ Քոչարեանի՝ որեւէ այլ ընտրանք չունեցող իրաւայաջորդ, ինչը դժուար թէ հաճելի լինի ՀՀ նախագահի համար, եւ ամենից կարեւորը՝ մշուշոտ է դառնում Ռ. Քոչարեանի քաղաքական ապագան Հայաստանում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՉԵԱՆ
«ԻՐԱԻՈՒՆՔ»
5-23-06

նրանք հիմա լայ լինում եւ բողոքում իրենց վրայ «նալոգ դրած» Արթուր Բաղդասարեանից՝ նրանք վճարում էին գիտակցաբար եւ շատ յստակ հաշուարկով՝ «մէկը ծախսեն-տասը ծածկեն» սկզբունքով: Այսինքն՝ իշխող կուսակցութիւններից մէկը նրանց համար «տանիք» էր՝ եկամուտները թաքցնելու եւ պետերւջէ չմուծելու համար: Այստեղ գաղափարական կամ անձնական դրդապատճառներ որոնելն անիմաստ է՝ գործում են բիզնեսի (ցաւօք սրտի, անօրինական բիզնեսի) անողոք օրէնքները: Այսօր ՕԵԿ-ն այլեւս իշխող կուսակցութիւն չէ, ուստի այդ մարդկանց նոր «պապա», նոր «տանիք» է պէտք: Բայց այս դէպքում «տանիքը» պաշտօնապէս յայտարարուի:

Բայց ՕԵԿ-ն այս առումով ամենեւին էլ բացառութիւն չէ: Տանապատիկ ակելի շատ «հարազտ» կուսակցութեանը մուծում են ՀՀԿ-ի գործարար պատգամաւորները եւ, համապատասխանաբար, տանապատիկ ակելի շատ եկամուտներ են ծածկում: «Հանրապետականը» «տանիք կանգնելու» անհամեմատ ակելի մեծ հարաւորութիւններ եւ լծակներ ունի: Մուծում են նաեւ այլ գործարարներ իշխող (կամ «իշխելիք») կուսակցութիւններին եւ բարձրաստիճան այլ պաշտօնեաների՝ նոյն նպատակով: Փոքր-ինչ այլ է թերեւս միայն ՀՅԴ պարագան. բացի դաշնակցական բիզնեսմենների եկամուտներից, նրանց փող են ուղարկում սփիւռքահայ կուսակցութեան ընկերները՝ հայրենի Մալիսի վարում գործունէութիւն ծաւալելու համար: Բայց չգիտես, թէ որն է ակելի լաւ. անյայտ աղբիւրներից արտասահմանեան փողեր ստանալը, թէ՛ հայրենի բիզնեսմեններին «կրկնելը»:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱԻՕՏ»
5-19-06

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ՀՆԱՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPEB. ԱՐՇԱԿ ՊԱՉԱՆՇԵԱՆ


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՄՈՒՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱԻԹԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

«ՆԱՏՕ-Ն ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԶԻ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ, ՈՉ ԷԼ ՄՂՈՒՄ Է ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԽՁԵԼՈՒՆ»

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հերթական անգամ Երեւանում էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի Հարաւային Կովկասի ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսը: Հայաստանի մայրաքաղաքում նա քննարկել է ՆԱՏՕ-ի հետ մեր անհատական գործակցութեան ծրագրին, եւ նաեւ այլ խնդիրներին վերաբերող հարցեր: Հասկանալի է, որ քննարկման ենթակալ հարցերը բաւական շատ են: Բայց դրանց վերաբերեալ որոշակի պարզաբանումներ ստանալու հայաստանցի լրագրողների փորձերը դատապարտուած էին անյաջողութեան, թէեւ Ռոբերտ Սիմոնսը մայիսի 22-ին ժամանելով Երեւան, մայիսի 23-ին իր հանդիպումներն աւարտեց մամուլի ասուլիսով:



ՆԱՏՕ-ի ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնս

Քական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան հետ գործակցութեանը, եւ նախընտրուած է այդ պայմանագրի անդամների հետ երկկողմ յարաբերութիւնը:

Որեւէ հարցի վերաբերեալ Ռոբերտ Սիմոնսը որեւէ աւելի բան չասաց, քան ասել էր մօտ վեց ամիս առաջ, Հայաստան կատարած վերջին այցի ընթացքում: Սիմոնսը հերթական անգամ գոհունակութիւն յայտնեց Հայաստանի հետ անհատական գործակցութեան ծրագրից, որն ըստ ՆԱՏՕ-ի պաշտօնակցի առաջադիմում է: «ՆԱՏՕ-ն Հայաստանին անդամակցութիւն չի պարտադրում, ոչ էլ մղում է այլ երկրների հետ յարաբերութիւն իրեն իրեն», յայտարարեց Ռոբերտ Սիմոնսը, ասելով, որ Ռուսաստանի հետ յարաբերութիւնը Հայաստանի որոշելիքն է, թէ ռազմակայանների առկայութեան, եւ թէ այլ հարցերի առումով: «ՆԱՏՕ-ն դրա վերաբերեալ պրոբլեմ չունի», յայտարարեց Սիմոնսը: Նա միայն յայտարարեց, որ ՆԱՏՕ-ն շարունակում է դէմ լինել Հաւա-

ՆԱՏՕ-ի հետ գործակցութիւնն ընտրում են երկրները, եւ դա բխում է երկուստեք շահից, ընդգծում է Հիւսիսատլանտեան դաշինքի գլխավոր քարտուղարի Հարաւային Կովկասի յատուկ ներկայացուցիչը: Այդ առնչութեամբ նա նշում է, որ իր ընտրութիւնը կատարել է նաեւ Հայաստանը, որի Անհատական գործընկերութեան ծրագրից, ըստ Ռոբերտ Սիմոնսի, կօճիի Հայաստանին լուծել իր առաջ դրուած նպատակները: Սիմոնսի հետ համատեղ ասուլիս տուող ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսեանն էլ շտապեց աւելացնել, որ ՆԱՏՕ-ի հետ անհատական գործընկերութեան ծրագրից ոչ միայն առնչուած է պաշտպանական բնաւառութիւն, այլեւ այն բոլոր ոլորտներին, որոնց բարեփոխումը գտնուած է եւրախնտեգրման գործընթացի շրջանակում:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՂԲԱՅՐԸ ՄՊԱՌՆԱՑԵԼ Է ԼՐԱԳՐՈՂԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Մայիս 22-ին խորհրդարանում ԱԺ պատգամաւոր, ՀՀԿ խմբակցութեան անդամ, Սերժ Սարգսեանի եղբայր Ալեքսանդր Սարգսեանը անպարկեշտ հայցոյանքների շարք է ուղղել «Իրաւունք» թերթի թղթակից Թագուհի Թովմասեանի հասցէին, ապա նաեւ սպառնացել, թէ «վերջը լաւ չի լինի»:



ՀՀ Խորհրդարանի պատգամաւոր Ալեքսանդր Սարգսեան

Թագուհին թերթում ընդամէնը տեղեկատուութիւն էր տուել այն մասին, որ Սաշիկ Սարգսեանը «Շանթ» ռեստորանում մասնակցել է մի թաղային հեղինակութեան ծննդին, որը տեղի է ունեցել Մայիսի 3-ին, Սոչիի յայտնի թուիչքից ժամեր առաջ: Խնճոյքի ժամանակ գինովցած հեղինակութիւնները յիշել են, որ մի քանի օր առաջ խնդիր են ունեցել Սաշիկ Սարգսեանի հետ, իսկ աւելի ձիւղ, նա խառնուած է եղել խոշոր գումարների հետ կապուած պատմութեան մէջ, ինչի պատճառով այդ հեղինակութիւնները որոշել են յարաբերութիւնները նրա հետ պարզել հենց տեղում, եւ ռեստորանի բակում տեղի է ունեցել «ռազբորկա»:

ընել է Սարգսեանը: Միջադէպին ներկայ էր նաեւ ՀՀԿ խմբակցութեան անդամ Աշոտ Աղաբաբեանը, որը փորձում էր հանգստացնել «պատգամաւորին», իսկ վերջինս շարունակում էր խուլիգանական հայցոյանքներ տալ երիտասարդ լրագրողուհուն բոլորի ներկայութեամբ: «Եթէ դու չասես, թէ ով աս տուել էր ինֆորմացիան քեզ, դու պրոբլեմներ կ'ունենաս, դու գիտես չէ՞ ես ով եմ», - վերջում սպառնացել է պաշտպանութեան նախարարի եղբայրը:

Խորհրդարանում Ալեքսանդր Սարգսեանը փորձում էր պարզել, թէ յատկապէս ով է տուել այդ ինֆորմացիան լրագրողին՝ Թագուհի Թովմասեանին: «Դուք կեղտ էք, գիբիլ էք, դուք ի՞նչ թերթ էք, որ ձեզ հերքում տամ: Աղջիկ ջան, դու գիտէ՞ս, թէ ես ով եմ», - յայտարարե-

Միջադէպին «խառնուել» է նաեւ ԱԺ պատգամաւոր Հրանդ Խաչատրեանը, որն ասել է, թէ եթէ խնդիր ունէք, մեզ ասէք, գիտէք մեզ էլ, թերթն էլ, լրագրողինց ի՞նչ էք ուզում: «Ըտե՛նց էք անում, ձեր պրոբլեմն էն աս, որ դուք աղջիկներին եք դէմ տալի», - ասել է Սաշիկ Սարգսեանն ու մոթմոթալով հեռացել:

10 ԶԱԶԱՐ ՍՓԻՌԲԱՅԱՅ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԶԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հայրենադարձութեան եւ հիմնաւորման «Երկիր» միութիւնը «Հայրենադարձութեան մասին» օրէնքի ընդունումն ու հայրենադարձութեան գործընթացի մեկնարկը համարելով Հայաստանի զարգացման հիմնական երաշխիքներից մէկը՝ 2005թ. Սեպտեմբերի 25-ին հրապարակել է բաց նամակ, որտեղ կոչ է արուել ընդունել հայրենադարձութեան մասին օրէնք եւ տալ մեկնարկ հայրենադարձութեան ազգային ծրագրին: «Երկիր» միութեան նախագահ Սեւակ Արծրունու խօսքով, իրենք այդ նամակն ուղարկել են ՀՀ ԱԺ ղեկավարներին: Վերոնշեալ բաց նամակին արձագանքել են ԱԺ ՀՀԿ-ն եւ ՕԵԿ-ը: ԱԺ պատգամաւորների եւ «Երկիր» միութիւնների ներկայացուցիչների հետ առանձին հանդիպումների ժամանակ ԱԺ պատգամաւորները պատրաստակամութիւն են յայտ-

նել սատարել «Հայրենադարձութեան մասին» օրէնքի մշակմանն ու ընդունմանը: «Երկիր» միութեան նախագահ Սեւակ Արծրունին, որ նոյնպէս հայրենադարձ է, կարծում է, որ գանգուածային հայրենադարձութեանը կը նպաստի միայն վերոնշեալ օրէնքի ընդունումը: Իսկ այն իրականացնելու համար Սեւակ Արծրունին գտնում է, որ ժամանակ է պէտք, քանի որ Հայաստանը սփիւռքի համար մի քիչ օտար է իր բարբերով եւ սովորոյթներով՝ դրան յարմարուել է պէտք: Լուսանջլեւասայ Արաբեան վիզէնը, որ արդէն մէկ տարի է, ինչ վերադարձել է Հայաստան, ասում է, որ իր համար կենցաղային սովորոյթների եւ բարբերի դէմ պայքարը դարձել է ամենօրեայ խնդիր: Ըստ որոշ տուեալների, վերջին տարիներին մօտ 10 հազար սփիւռքահայ է բնակութիւն հաստատել Հայաստանում:

ՊԱՐԱՆՁՈՒՄ ԵՆ ՓՈԽԵԼ ՊԱՐԱՆՁԱՏԻՐՈՒԹԵԱՆ «ՈՐԱԿԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Համաշխարհային Հայերի Կոնգրեսը ՀՀ իշխանութիւնից պահանջում է, որպէսզի Հայոց Յեղասպանութեան պահանջատիրական «որակը» փոխուի: Հայաստանում մի շարք միջոցառումների մասնակցելու նպատակով Մոսկուայից ժամանած քաղաքագետ Անդրանիկ Միհրանեանը տեղեկացրել է, որ այդ ցանկութիւնն այս շաբաթուրդ ընթացքում փոխանցուել է Ռոբերտ Քոչարեանի եւ ԱԳՆ նախարար Վարդան Օսկանեանի հետ հանդիպումների ժամանակ:

ուածում ուսումնասիրելու է, թէ հայցը ինչպէս ձեւակերպուի եւ ում դէմ:

Անդրանիկ Միհրանեանի ներկայացմամբ, փորձագետների խումբը բաւական ուժեղ է եւ նրանում ընդգրկուած են այնպիսի մարդիկ, որոնց անունը միջազգային հնչեղութիւն ունի: Այդ խմբում, օրինակ՝ ընդգրկուած է Իսրայէլի մի ներկայացուցիչ, որը ժամանակին գբաղուել է Հոլոքոստի հարցով: Այնուամենայնիւ, քաղաքագետը համոզուած է, որ նախաձեռնութիւնը միանգամից արդիւնք չի տայ եւ նշում է, որ «պէտք է սթափ լինենք եւ հասարակութեանը չզցնք թիւրիմացութեան մէջ»՝ ակնկալուող արդիւնքի իմաստով: Անդրանիկ Միհրանեան ակնարկում է նաեւ, որ թէեւ փորձագետների խումբն աշխատում է այդ ուղղութեամբ, սակայն վերոնշեալ քայլին գնալու համար, իհարկէ, անհրաժեշտ է ՀՀ ղեկավարութեան որոշումը:

Համաշխարհային Հայերի Կոնգրեսը համոզուած է, որ հայերի պահանջատիրութիւնը չպէտք է սահմանափակուի միայն ցեղասպանութեան փաստը ճանաչելով, պէտք է լինի նաեւ պատասխանատուութիւն: Համարելով, որ ցեղասպանութեան փաստի ճանաչումը խորհրդարանների կողմից այլ բան է, իսկ դատարանի կայացրած որոշումը՝ մէկ այլ բան, Կոնգրեսն առաջարկում է, որպէսզի Հայոց Յեղասպանութեան հայցով Հայաստանը դիմի ՄԱԿ-ի դատարան, որպէսզի հարցը լուծուի նաեւ միջազգային իրաւունքի հիմունքով: Այդ նպատակով արդէն ստեղծուել է նաեւ փորձագետների խումբ, որն առաջիկայ ժամանակահատ-

իսկ արդեօ՞ք դատարան դիմելու քայլն աւելի չի վատթարացնի Հայաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւնները՝ հարցին Անդրանիկ Միհրանեանը պատասխանեց: «Միթէ՞ դատարան դիմելը կարող է վատթարացնել յարաբերութիւնները, յատկապէս եթէ դրանք չկան էլ»:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԽՈՂԸՆԴՈՏԵԼ ԵՆ ՈԱՅՅԻ ՅՈՎՀԱՆԻՍԵԱՆԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ

Մայիս 19-ին ոստիկանութիւնը խոչընդոտել է «Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավարի հանդիպումը կուսակցութեան Արմաւիրի ակտիւի հետ: Մինչ Արմաւիր այցելելը, «Ժառանգութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամները հանդիպում են ունեցել Միասնիկեան գիւղում, որն անցել է ոստիկանների խիստ հայեացքի ներքոյ: Արմաւիր չհասած, «Ժառանգութիւն» կուսակցութեան տարածքային գրասենեակից տեղեկացրել են, որ կառուցի ղեկավարին՝ Լեւոն Մարգարեանին հրաւիրել են ոստիկանութիւն եւ սպանացել, որ եթէ Ռաֆֆի Յովհաննիսեանը գա Արմաւիր, ապա իրենք կը դիմեն համապատասխան միջոցների: Այսինքն արգելել են

կուսակցութեան իսկ գրասենեակում կուսակցութեան անդամների եւ ղեկավարի հանդիպումը: Լուրն իմանալով, Ռաֆֆի Յովհաննիսեանը, Վարդան Խաչատրեանը եւ Յովսէփ Խոբրշուղեանը այցելել են ոստիկանութեան բաժանմունք, որտեղ սակայն նրանց ոչ ոք չի ընդունել՝ պատճառաբանելով, որ ոստիկանապետը բոլոր պատասխանատուների հետ խորհրդակցութեան է: Հանդիպման խոչընդոտելը շարքայինները բացատրել են նրանով, որ Արմաւիրում է վարչապետը: Ռաֆֆի Յովհաննիսեանի հանդիպումը իր ակտիւի հետ, այնուամենայնիւ, կայացել է: Տեղեկատուութիւնը ճշդել ենք «Ժառանգութիւն» կուսակցութիւնից:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՒՐԱՔԱՆՉԻՐ 1000 ՄԱՐԴՈՒՆ ԲԱԺԻՆ Է ԸՆԿՆՈՒՄ 66 ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Օրերս հրապարակուեցին աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, համակարգիչների տարածմանը, ինտերնետի մատչելիությանը վերաբերող համեմատական ցուցանիշներ:

Տեղեկատվական եւ կոմունիկացիոն տեխնոլոգիաների զարգացման համար Միացեալ Նահանգները ծախսում է իր Համախառն ներքին արդիւնքի 9 տոկոսը՝ 3600 դոլար մէկ շնչի հաշուով: Հայաստանի մասին այս կարգի տեղեկութիւններ չեն հրապարակուում, մինչդեռ Ռուսաստանում համապատասխան ցուցանիշները հաւասար են 3,3 տոկոսի եւ ընդամենը 130 տոլարի:

Նախկին խորհրդային հանրապետութիւններից ամենակոմպիւտերիզացուածը էստոնիան է, որտեղ իւրաքանչիւր 1000 բնակչից 921-ը ունի համակարգիչ, նրանցից էլ զրե-

թէ 500-ը օգտուում է ինտերնետին:

Հայաստանի ցուցանիշները շատ աւելի համեատ են. 1000 բնակչից համակարգիչ ունի 66-ը, իսկ ինտերնետից օգտուում են ընդամենը 50-ը: Համեմատութեան համար, Ատրպէյճանում 1000-ից 18-ն ունի համակարգիչ, սակայն ինտերնետից օգտուում են 49-ը՝ ինտերնետ-սրճարաններում կամ աշխատանքի վայրում: Այս առումով Վրաստանը նոյնպէս զիջում է Հայաստանին: Փոխարէնը, Վրաստանում ինտերնետի ամենական վարձն է ցածր՝ ընդամենը 26 տոլար:

ԱՊՀ տարածքում ինտերնետի ամենական վարձի առումով «ռեկորդակիրը» Ատրպէյճանն է՝ 108 դոլար: Աշխարհում ամենաէժան ընտերնետը Իրանում է՝ 6 դոլար, իսկ ամենաթանկը Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւնում՝ 175 դոլար: Ամերիկացիները ինտերնետի համար ամենական վճարում են 15 տոլար:

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆԵՐ

Մարունակուած էջ 1-էն

եակին հասած դիմումներու ստուգման ընթացքին ի յայտ եկած է թէ, դիմումնազիրերու ստորագրութիւնները չեն համապատասխանէր Գրասենեակին մօտ գտնուող ստորագրութիւններուն:

Այս պատճառաւ, Գաւառի արձանագրութեան գրասենեակը նամակներ յղած է ենթականերուն, որոնցմէ շատեր պատասխանած են թէ, իրենք նման դիմումներ չեն ներկայացուցած եւ այդ ստորագրութիւնները կեղծ են: Այս պատճառաւ Արձանագրութեան Գրասենեակը փաստաթուղթերը յանձնած է դատախազութեան:

Մամլոյ ասուլիսի ընթացքին ելոյթ ունեցաւ նաեւ Հայ Ամերիկեան Խորհուրդի ներկայացուցիչ Տոքթ. Համբիկ Սարաֆեան, որ յայտարարեց թէ այս պարագային զո՛ւր Հայ քաղաքացիներն են որոնց անունները

օգտագործուած են պաշտօնական փաստաթուղթեր կեղծելու համար:

«Ամերիկահայութիւնը, որ աւելի քան հարիւր տարուայ արմատներ ունի այս երկրէն ներս, միշտ ալ հետեւած են օրէնքներուն: Դժբախտաբար, այս պարագային գտնուած են շրջանակներ, որոնք օգտագործելով վերջին տարիներուն Ամերիկահաստատուած հայերու լեզուի եւ օրէնքներու չիմացութիւնը, դիմած են նման ընտրական կեղծիքներու»:

Ընկ. Սարաֆեան հայտնեց անուշով դատապարտել էտք այս կեղծիքները, կոչ ըրաւ որպէսզի դատախազութիւնը լրջօրէն զբաղի այս հարցով:

Յայտնեք որ, Յունիս 6-ին տեղի ունենալիք նախնական ընտրութիւններուն նահանգային 43-րդ ընտրաշրջանէն ներս Ֆրանք Քինթերոյի միջակիցն է թեկնածու Փօլ Գրիգորեան:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԻՐ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Մարունակուած էջ 1-էն

թէն դժգոհ մնաց «Ազգային Միաբանութիւն» խմբակցութեան ղեկավար Արտաշէս Գեղամեան, որ Արթուր Բաղդասարեանին մեղադրեց Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի անունները չտալու գանոնք չքննադատելու համար: Գեղամեանի այս միջամտութենէն ետք «Օրինաց Երկիր»-ի եւ Ազգային Միաբանութեան պատգամաւորները սկսան գիրար մեղադրել՝ Սերժ Սարգսեանի կողմէ նիւթական միջոցներ ստանալու մէջ:

«Խօսում էք պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանից: Բայց նոյն պաշտպանութեան նախարար

Սերժ Սարգսեանից ֆինանսական աջակցութիւն էք ստանում՝ ստուերային խողովակներով», - յայտարարեց Բաղդասարեան: Ի պատասխան որուն, Արտաշէս Գեղամեան ըսաւ, - «Փաստ ունես՝ դատի տուր. Սերժ Սարգսեանին՝ կաշառք տալու, ինձ էլ՝ վերցնելու համար, թէ չէ հիմա Սերժի գակազն ես կատարում»:

Բաղդասարեանէն յետոյ հրաժարական տուին նաեւ Ազգային Ժողովի յանձնաժողովներու նախագահներ, «Օրինաց Երկիր» կուսակցութեան անդամ Մհեր Շահգեղեան եւ Գազիկ Միլեան, որմէ ետք կուսակցութեան անդամները լքեցին դահլիճը:

ԹՈՒՐՔԻԱ ԴԺԳՈՅ

Մարունակուած էջ 1-էն

նի օրակարգէն: Հրապարակուած պաշտօնական յայտարարութեան մէջ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը կը յայտնէ թէ, կ'ակնկալէ որպէսզի Ֆրանսայի Խորհրդարանը ոչ միայն հրաժարի օրինագծի քուէարկութենէն, այլ նաեւ, «պաշտպանէ 1915 թուականի իրադարձութիւնները ուսումնասիրելու նպատակով հայթրքական համատեղ յանձնաժողով ստեղծելու մասին Թուրքիոյ առաջարկը»:

Օրինագծի քննարկման ըն-

թացքին բաւական սուր վիճաբանութիւններ տեղի ունեցան: Օրինագիծը, որ ներկայացուած էր Ֆրանսայի խորհրդարանի ընդդիմութեան՝ Սոցիալիստական կուսակցութեան կողմէ, արժանացաւ նաեւ իշխող պահպանողական կուսակցութեան ներկայացուցիչներու պաշտպանութեան:

Սակայն, ֆրանսական կառավարութիւնը կտրականապէս դէմ էր օրինագծին: Արտաքին գործոց նախարար Ֆիլիփ Դուսաէ Փլազի խորհրդարանէն ներս յայտարարեց, որ եթէ օրինագիծը ընդունուի, Թուրք ժողովուրդի մէծ մասը գայն պիտի նկատէ ոչ բարեկամական քայլ, որ լուրջ

ԵՐԱՏԵՍԻԼ ԵՐԳԻ ՄՐՑՈՅԹԻՆ ԱՆՏՐԵՆ ԳՐԱԻՅՑ 8-ՐԴ ՏԵՂԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Աթէնքում աւարտուեց Եւրատեսիլ երգի մրցոյթի եզրափակիչը: Առաջին անգամ մասնակցելով, Հայաստանի ներկայացուցիչ Անդրէն հաւաքեց 129 միաւոր եւ գրաւեց 8-րդ տեղը: Յաղթեց Ֆինլանդիան ներկայացնող ռոք խումբը, եւ յաջորդ տարի Եւրատեսիլը կը հիւրընկալուի Ֆինլանդիայում: Երկրորդը Ռուսաստանն էր, երրորդը՝ Բոսնիա-Հերցեգովինան:

Հայաստանի ներկայացուցչին միաւորներ են տուել Ռուսիան, Բելգիան, Լիտվան, Կիպրոսը, Հոլանդիան, Ուկրաինան, Ռուսաստանը, Լեհաստանը, Ֆրանսիան, Բելառուսը, Գերմանիան, Իսպանիան, Մոլդովան, Իսրայէլը, Յունաստանը, Բուլղարիան եւ Թուրքիան: Առաւելագոյն միաւորներ՝ 12, տուել են Բելգիան եւ Ռուսաստանը: Հայաստանն, իր հերթին, 12 միաւոր էր տուել ռուս երգչի՝ Դիմա Բիլանի օգտին:

Եւրատեսիլի քուէարկութիւնը նման էր «ռեզիտալ համագործակցութեան» եւ աչքի ընկաւ մի շարք օրինաչափութիւններով: Նախ, նկատելի էր հարեւան երկրների համերաշխութիւնը միմեանց օգտին քուէարկելու: Ասենք, Բալկանեան երկրների, Սկանդինաւների, Հիւսիսային Եւրոպայի, Մերձքալթեան երկրների, սլավոնական երկրները:

ԳՏՆՈՒԱԾ «ՍԵՒ ԱՐԿՈՆ» ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Մայիս 22-ին յայտնաբերուած եւ Սեւ ծովի յատակից վեր բարձրացուած «Արմաւիա» ընկերութիւն վթարուած A320 ինքնաթիռի «սեւ արկղը» պարունակում է օդանաւի անձնակազմի խօսակցութիւնների ձայնագրութիւնները:

Ռուսաստանեան «Նովոստի» գործակալութեան տեղեկացմամբ, այդ մասին յայտարարել է երկրի տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինը:

Նախարարը յաւելել է, որ «սեւ արկղը» 20-50 սանտիմետրանոց տիղմի շերտի տակ է եղել:

Երկրորդ ինքնագրիչ սարքի որոնումները, որը պարունակում է վթարուած ինքնաթիռի չափիչ սարքերի արձանագրած տուեալները, շարունակուում են: Լեւիտինի պարզաբանմամբ, այն ենթադրաբար պէտք է լինի արդէն գտնուած առաջին «սեւ արկղի»



Հայկական օդանաւի «սեւ արկղ»-նրէն մին կը բերուի դուրս

յայտնաբերման վայրից 3-5 մետր հեռաւորութեան վրայ:

Մայիսի լոյս 3-ի զիշերը Ադլերի օդանաւակայանում վայրէջք կատարելիս Սեւ ծովն ընկած հայկական օդանաւի բոլոր ուղեւորները եւ անձնակազմը՝ 113 մարդ, գոհուել են:

12 ՀԱՅԵՐ ՎԻՐԱԴՐՈՒՄԸ ԵՆ

Մարունակուած էջ 1-էն

մը մտած է շրջափակ եւ սկսած է ուղղուել համախմբուած ժողովուրդի վրայ: Հակառակ ներկաներէն շատերու հերոսական ջանքերուն 10 երեխաներ եւ երկու չափահասներ վիրատուութեան են: Թէեւ մահ չէ պատահած, սակայն կան լուրջ վնասուողներ:

քաղաքական հետեւանքներ կ'ունենայ եւ կը թուլացնէ Ֆրանսայի ազդեցութիւնը ոչ միայն Թուրքիոյ մէջ, այլ ամբողջ տարածաշրջանէն ներս:

Ինքնաշարժի վարորդը դիմած է փախուստի, սակայն հետագային ձերբակալուած է ոստիկանութեան կողմէ:

Դէպքի մասին քննութիւններ կատարող ոստիկանները Եկեղեցույ հովիւ Տէր Կարապետ Քոչազեանին ապահովցուցած են թէ, եղածը կրօնական կամ ցեղային բնոյթ չունի:

Օրինագիծի քննարկման ընթացքին Խորհրդարանի շէնքի մօտ հարիւրաւոր ֆրանսահայեր կը սպասէին Ազգային Ժողովի որոշումին:

ԻՆՉՊԵՍ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ԿՐԱՅ

ԱՂԱՍԻ ԵՆՈՒՔԻՆ

1998-ին Քոչարեանի նախագահ դառնալուց յետոյ Հայաստանում ժողովրդավարութեան վիճակը սկսեց կտրուկ վատանալ:

Ընդունուած կարծիք է, որ դա պայմանաւորուած էր ինչպէս յեղաշրջման մեթոտի առանձնապատկութիւններով, այնպէս էլ իշխանութեան եկած ուժերի պատկերացումներով իշխանութեան, հայրենասիրութեան, բարգաւաճման, սեփական շահի եւ այլ քաղաքական կատեգորիաների մասին: Սրան գուրդնթաց սկսուեց ընդդիմութեան պայքարը ոչ միայն իշխանութեան հասնելու, այլեւ իշխանութեան հասնելու մեթոտների՝ ժողովրդավարութեան գարգացման համար, սակայն ընդդիմութիւնը շարունակաբար պարտուած էր թէ՛ մէկ, թէ՛ միւս ասպարէզում, ընդ որում, ի տարբերութիւն հարեւան վրաստանի, ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ Ատրպէյճանում ընդդիմութիւնը միջազգային հանրութիւնից լուրջ աջակցութիւն չէր ստանում: Ընդունելով հանդերձ Քոչարեանի բարձր արուեստը ինտրիպների բնագաւառում, ընդդիմութեան գաղափարական սնանկութիւնը, լիդերի բացակայութիւնը որպէս այս պրոցեսների նման ընթացքի կարեւոր շարժիչ ուժ՝ փորձենք վերհանել նաեւ այս ընթացքի արտաքին քաղաքական բաղադրիչը: Միջազգային հանրութեան լուռ աջակցութիւնը Քոչարեանի յեղաշրջմանը, իսկ այնուհետեւ՝ նրան ընդունելը որպէս Հայաստանի լեգիտիմ ներկայացուցիչ, ստիպում է մտածել եւ հասկանալ Քոչարեանի դերը ամենակարեւոր հարցում, որ միջազգային հանրութիւնն ունի Հայաստանի վերաբերեալ՝ դարաբաղեան կարգաւորման խնդրում: Ընդհանրապէս, կասկածելի օրինականութեամբ դեկլարներին բանակցողները մեծ դժուարութեամբ են ընդունում՝ սեղանի շուրջ նստեցնելուց առաջ նրանց դիմաց դնելով որոշակի նախապայմաններ: Այսօր արդէն ակնյայտ է, թէ Քոչարեանի առաջ ինչպիսի նախապայմաններ են դրել՝ դա Ղարաբաղի հեռացումն էր բանակցային գործընթացից: Խնդիրն այն է, որ 1992-98թթ. բանակցային պրոցէսի հիմնական խոչընդոտ էր դիտուում այն, ինչ մենք համարում էինք մեր հիմնական ձեռքբերումը՝ հայկական կողմի երկու բանակցողով՝ Հայաստանով եւ Ղարաբաղով ներկայացուած լինելը: Քոչարեանի նախագահա-

ցումը նրա առջեւ դրուած նախապայմանների կատարմամբ հանեց այդ տեխնիկական խոչընդոտը եւ 1999-ին մեծ խանդավառութիւն կար դարաբաղեան հարցի լուծման ասպարէզի վերաբերեալ: Հետագայ իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ որպէս բանակցային պրոցեսը դիւերսիֆիկացնող գործօն ասպարէզ մտաւ նոր կողման՝ հանրային կարծիքը, որը պէտք է ներկայացնէին ազատ մամուլը եւ ընդդիմութիւնը: Այս գործօնը շատ թոյլ աշխատեց մէկ անգամ՝ Քի վեստից յետոյ: Այստեղ էր, որ Քոչարեանի արտաքին ու ներքին քաղաքականութեան մէջ նկատուեց կարեւոր հակասութիւն: Քոչարեանը շարունակեց ընդդիմութեան եւ մամուլի ոչնչացման պրոցէսը մինչեւ այս դաշտի անապատացումը եւ հաճոյք էր ստանում առանց դիմադրութեան հեշտ յաղթանակներից: Միջազգային հանրութիւնը այդ ընթացքներին արձագանքում էր անատամ յայտարարութիւններով, սակայն այն պարզ փաստը, որ մինչեւ այսօր չի կարողացել հասնել, ասենք, «Ա1+»-ի վերաբացմանը, ցոյց էր տալիս, որ այդ հարցում առանձնակի շահագրգռութիւն չկայ, իսկ ընդդիմադիր միտինգի ջարդը ամբիկեան դեպքնատան դիմաց կամ էվանսի պէս «իշխանամէտ» դեպքնատան ուղարկելը ակնյայտ է դարձնում, որ Արեւմուտքն այստեղ նահանջում է ժողովրդավարութեան իր չափանիշներից եւ իր կողմից է նպատակում Հայաստանի քաղաքական դաշտի անապատացմանը: Պատճառն այստեղ միակն է՝ Քոչարեանի դիրքերի թուլացումը բանակցային պրոցէսում եւ նրան փակուղու մէջ գցելը:

Իհարկէ, Քոչարեանը կ'ուզէ նար, որ լինէր մի լուրջ գործօն, որի վրայ կը բարդեր չբանակցելու եւ չհամաձայնուելու իր քաղաքականութիւնը, որն իրեն կ'ուժեղացնէր բանակցութիւններում, սակայն այդ գործօնը՝ ուժեղ ընդդիմութիւնը, հասարակական սեկտորը, մամուլը, անմիջական ներքին սպառնալիք են նրա իշխանութեան համար: Այդ պատճառով Քոչարեանը ստիպուած է խուսանաւել ներքին սպառնալիքի՝ ընդդիմութեան, եւ արտաքին սպառնալիքի՝ դարաբաղեան փաստաթուղթը ստորագրելու պարտադրանքի միջեւ: Որպէս ալտերնատիվ լուծում պսել-դոլընդդիմութիւն ստեղծելու հայրենական ճարտկամութիւնը նոյնպէս արդեն չի աշխատում՝ աւելի

ԵՐԱԺԱՐԱԿԱՆ ՍԸ ՈՐ ՊԻՏԻ ԳԱՐ ՈՐՈՇԱՊԵՍ ԸԱՍՏԱՏԵԼՈՒ ԱՅԼԱՊԵՍ ԸԱՆՐԱԾԱՆՕԹ ՆԵՐՔԻՆ ՓՏԱԽՏԸ

Շարունակուած էջ 1-էն

իմն ու իր կուսակցութիւնն էին ուզում»:

Այս ժխտական բոլոր տուեալները մղած են Ա.Ժ.ի նախագահը, որ վերանայի իր ու իր կուսակցութեան ազգային, ընկերային ու միջազգային բաղաձայնութիւնը, ու անցնի առողջ ԸՆԴԻՄՈՒԹԵԱՆ, իր իսկ բառերով ըսած՝ «գնալու համար պայմարի մեր ցանկալի»:

Կասկածներ կան, որ պետութեան երկրորդ դեմքի ընդդիմադիր

շարքերը անցնելու խաղ է: Մեկնելով այն իրողութեան, որ մինչ Պաղտաստեան լուրջ ամբաստանութիւններու ենթակայ կը դարձնէ Քոչարեանի իշխանութիւնը, անդին՝ իշխանութիւններու ներկայացուցիչներ (օր. Ա.Ժ.ի փոխ նախագահը, Տ.Ա.Գ.) դրուատանքով կ'արտայայտուին «Օրինաց երկիր» կուսակցութեան հասցէին:

Արդեօ՞ք, «Օրինաց երկիր» կուսակցութեան ընդդիմադիր դիրքերը անցնելու ենթադրել չտար, թէ Ա.Ժ.ի իշխանամէտ կուսակցութիւններու համախմբումէն ներս սկսած է խմորումը պատակտու մի, ու որիչներ, շուտով, կրնան հետեւիլ «Օ.Ն» կուսակցութեան օրինակին:

խորացնելով փակուղին: Քոչարեանը, որ գոնէ աշխարհ տեսնելու, բայց նաեւ իր լեգիտիմութիւնը ցուցադրելու համար միշտ հաճոյքով էր արձագանքում ցանկացած հրաւերի, այժմ խուսափում է աշխարհի հզորների հետ հանդիպումից, քանի որ նահանջի, խաբէլու եւ խուսանաւելու ճանապարհները այլեւս փակ են: Միւս գործօնը, որ թուում էր, թէ կը նպաստի Քոչարեանի խուսանաւելուն՝ կոշտ դիրքորոշումն էր՝ միայն միացում կամ անկախութիւն: Համադրուելով ատրպէյճանական կոշտ դիրքորոշման հետ՝ առանց նախապայմանների տարածքների վերադարձ, թուում էր, թէ սա վերացնում էր բանակցութիւնների դաշտը, չէր թողնում քննարկման որեւէ եզր: Սակայն

միջազգային հանրութիւնը գտածի նոր տերմին՝ «5-10 տարուց հանրաքուէ», որը հայերէն թարգմանելուց կարող է նշանակել անկախութիւն, իսկ ատրպէյճաներէն՝ տարածքների վերադարձ: Կարծես այս խոչընդոտն էլ է յաղթահարուած, եւ ուրեմն մնում է միայն Քոչարեանին ու Ալիեւին բռնելն ու մի սենեակում փակելը: Քոչարեանը, կարծես, դեռեւս փորձում է Հայաստանում թաքնուելով լուծել իր յարատեւման խնդիրը: Այս տեխնիկական դետալը լուծելու համար եւս համաշխարհային հանրութիւնն ունի հարուստ փորձ՝ յիշենք Բելգրադի ուժեղացումը, որոնք աւարտուեցին սերբերին ուղղուած առաջարկով՝ որ հենց իրենք բռնեն ու յանձնեն Միլոշեւիչին:

ՄԱՍԻՍ ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax : -----

AGBU PASADENA HIGH SCHOOL REGISTRATION FOR 2006-2007 IN PROGRESS
High School Prep, 9, 10, 11 Grades

FOR INFORMATION, Please call


818.883.5379
 www.agbuphs.org

CLASSES WILL START
September 12, 2006

818.883.5379
 www.agbuphs.org

ՀԲԸՄ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ 2006-2007

Արձանագրութիւնները կը Շարունակուին Նախապատրաստական, 9, 10, 11 դասարաններու համար Յաւելիալ տեղեկութիւններու համար հեռաձայնել



ԹՈՒՐՔԵՐՈՒՆ՝ ԹՈՒՐՔԻԱՆ ԹՐՔԱՅՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐՄՄԵՆ ՔԻՒՐՔՅԱՆ

Հայոց Չարդէն՝ ցեղասպանութեան քառասուն տարի ետք Թուրքիոյ մէջ նոր ոճիր մը եւս գործուեցաւ: Ոճիր մը, որուն ականատես եղան ոչ միայն Կ. Պոլսոյ ժողովուրդը ու Թուրք լրագրողներ, այլ նաեւ IMF-ի ու World Bank-ի 8 Սեպտեմբերի ժողովին հետեւելու համար Կ. Պոլսի մեկնած օտար լրատուական գործակալութիւններու բոլոր ներկայացուցիչները:

6 Սեպտեմբեր 1955-ի երեկոյեան, լաւ կազմակերպուած խուժան մը, Կ. Պոլսոյ զանազան թաղերուն մէջ ոչ-մահմետական բնակիչներու բնակարաններուն, վաճառատուններուն եւ գործատեղիներուն վրայ յարձակեցաւ: Նման դէպքեր գուգահեռաբար պատահեցան նաեւ Զմիւռնոյ (Իզմիր) մէջ:

6-7 Սեպտեմբերի այդ ոճիրը՝ բռնաբարում, թալան եւ սպանդ, գործադրուեցաւ օրուայ վարչապետին գիտակցութեամբ ու հրահանգով, ինչպիսին էր 1915ի Չարդը:

«6-7 Սեպտեմբերի դէպքերը», ինչպէս յետագային կոչուեցաւ, Հանրապետական Թուրքիոյ կառավարութեան հետապնդած՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականութեան արիւնոտ մէկ պտուղն էր:

Օսմանեան կայսրութիւնը «բազմազգ պետութիւն» մըն էր: Այդ շրջանին «օսմանեան ազգ»-ի հասկացութիւնը կար: Բոլոր ժողովուրդները եւ ցեղային միաւորումները միասնաբար կը համարուէին «օսմանեան ազգ՝ օսմանցի»: Օսմանեան վերնախաւը, ի սէր կայսրութեան գոյատեւման, պետութեան «բազմազգ եւ բազմաշաղկապ» պատմութեանը հազարուցած էր, խորքին մէջ թուրքը նկատելով տիրապետող ազգ «Millet-i hakime- միլլէթի հաքիմէ»:

3 Նոյեմբեր 1839ին հռչակուած երկրին առաջին սահմանադրութեամբ (Թանզիմաթ Ֆերմանը) օսմանցիին մարդկային իրաւունքները պետական երաշխաւորութեան տակ առնուեցան: Իւրաքանչիւր օսմանցի, առանց ազգութեան ու կրօնի խտրութեան, յաշտ օրէնքի, իրարու հաւասար նկատուեցաւ: Մահմետական տարրը իր գերակայութիւնը կորսնցուց: Ինչոր որոշ անհանգստութիւններու տեղի տուաւ: Մահմանադրութիւնը պետական աւագանիին արգիլեց քմահաճ սնօրինութիւններ կատարել, որոնք կը կիրարկուէին պետու-



Թուրքիայի խուժանի յարձակումէն ետք

թեան հիմնադրութեան ի վեր:

Այս սահմանադրութիւնը պատրաստուեցաւ նկատի առնելով ֆրանսական սահմանադրութիւնը՝ գոհացում տալու Եւրոպային, յատկապէս Անգլիոյ, եւ ոչ թէ օսմանցի ժողովուրդին: Օսմանեան կայսրութեան մէջ պետական պաշտօնէութիւնը եւ գինուորական ծառայութիւնը, որպէս պատուաբեր ասպարէզներ, վերապահուած էին Թուրք ցեղին, թէեւ կայսրութեան վերջին շրջաններուն նախարարական աթոռ գրաւած հայեր այլ եղան: Ոչ-մահմետական ժողովուրդը առհասարակ կը զբաղէր առեւտուրով, որով տնտեսական կեանքը՝ առեւտրական ու ճարտարարուեստի հրապարակը, մեծամասնութեամբ հայերու եւ յոյներու ձեռքն էր, մասամբ ալ՝ հրեաներու: Անոնք իրենց արդար վաստակով հարստացած էին:

Ոչ-մահմետական այլ մարդիկը թէեւ չէին գինուորագրուեր, սակայն «պետէլ»՝ փոխարժէք կը վճարէին: 1914ին հռչակուած օրէնքով մը՝ Mkelleyet-Askeriye Kanun-i Muvaakkati (Միւլէյէթիյէթի Ասքերիյէ Քանունը Մուվաքքաթի-Չինուորական Պարտաւորութեան Առմժամեայ Օրէնք) ոչ-մահմետականներն ալ գինուորագրուեցան:

Երբ Օսմանեան կայսրութիւնը փլուզումէ փրկելու համար սուլթան Համիտի եւ Երիտթուրքերու որդեգրած փանիսլամիզմը եւ փանթուրանիզմը իր սպասուած արդիւնքը չտուաւ, Պալքանեան Պատերազմի պարտութենէն ետք (1913) ազգային՝ թրքական ոգի մը ստեղծելու աշխատանքին թափ տրուեցաւ:

Յաշտ իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան, Թուրքիան կը

պատկանէր Թուրքերուն եւ այդ Թուրքիան պէտք է ըլլար ոչ-Թուրք տարրերէ մաքրուած Թուրքիա մը: Սա, Օսմանեան կայսրութիւնը քանդելու եւ նոր Թուրք պետութիւն մը հիմնելու ծրագիրն էր:

Թալաթ, 1991ին, իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան Սլեանիկի մէջ գումարուած 4րդ համագումարին, պատգամաւորները կը վստահեցնէ, թէ Օսմանեան կայսրութիւնը Թուրք պետութիւն մըն է: Արդէն իթթիհատականներուն համար օսմանցի ըմբռնումը Թուրքի համապատասխան էր: Այդ ժողովին կեդրոնական վարչութեան անդամ կ'ընտրուին թրքացման գաղափարախօսութեան հայրը՝ Զիա Կէօքալիփ՝ ծագումով քիւրտ մը եւ իր երկու գործակիցները: Այս համագումարի աւարտին հրատարակուած յայտարարութեան մէջ կ'ըսուի, թէ՛ եթէ օսմանցիներու քաղաքականութիւնը ժողովուրդին կարելի չըլլայ համոզելով կիրարկել տալ, գինուորական ուժի գործածութեան կարելի է դիմել: (1)

Իթթիհատի կարկառուն դէմքերէն տոքթ. Նազըմ գաղտնի ժողով մը ընթացքին հետեւեալ արտայայտութիւնը կ'ունենայ. «Եթէ 1909ի մեր Ատանայի եւ այլ վայրերու մէջ կատարել տուածին նման տեղական Չարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կը հանի, մեր մաքրագործել առաջադրած ուրիշ տարրերը, արաբները, քիւրտները կ'արթնցնէ եւ վտանգը մէկի տեղ երեք կ'ըլլայ. կը մեծնայ եւ գործադրութիւնը կը դժուարանայ... Եթէ այս մաքրագործումը ընդհանուր եւ վերջնական պիտի չըլլայ, օգուտի տեղ վնաս կը բերէ. պէտք է հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռցուի»: (2)

Տոքթ. Նազըմ նոյն գաղտնի ժողովին նաեւ ըսած է «Ես թրքութիւնը կենդանացնելու համար ձեզի ընկեր, եղբայր եղայ, ես Թուրքին, միայն Թուրքին ապրիլը, այս հողերուն վրայ անկախ իշխող ըլլալը կը փափաքիմ: Ոչ-Թուրք տարրերը թող ջն ջուին, որ ազգութեան եւ որ կրօնին ալ պատկանած ըլլան: Այս երկիրը ոչ-Թուրք տարրերէն մաքրել պէտք է»: (3)

Նոյն ժողովին կը մասնակցի նաեւ տոքթ. Պահաթտիի Շաքիր: «... Մեր ազգային կալուածին մէջ միայն Թուրք յառաջդիմութիւնը եւ բարգաւաճումը կրնանք արտօնել. հինէն մնացած ազգերը, անհարգատ եւ վնասակար խոտերը արմատախիլ ընելով մեր հողը



Յարձակում Բիւրսայի մէջ

մաքրելու ստիպուած ենք: Մեր յեղափոխութեան նպատակ-ծրագիրը այս է... զանազան տարրերէ բաղկացած օսմանեան խառնուրդը ազգային դրոշմ չունի...», - կ'ըսէ ան: (4)

Այս ժողովին մասնակցած է նաեւ Ճաւիտ՝ իթթիհատի կառավարութեան ելեւմտական նախարարը: Ան ալ հետեւեալ արտայայտութիւնը ունեցած է. «Տնտեսական իշխանութիւնը հայու ձեռք է, հայերէն ոչ ոքի մնալու պայմանաւ բնաջնջումը մեր ազգային քաղաքականութեան տեսակէտին որչափ որ ստիպողական պէտք մըն է, նոյնչափ ալ Թուրքին տնտեսական իշխանութիւնը հիմնելու համար կարելոր է, քուէի դիմենք»: (5)

Տակաւին սուլթան Մահմուտ Բ.ի ջրով (1808-1838) առեւտրական հրապարակը թրքացնելու համար ոչ-մահմետական ու օտարահայ պատակ առեւտրականներու չափ գործունեայ չեղող մահմետական առեւտրականներու տրուեցաւ այնպիսի մենաշնորհներ, որոնք ժամանակի ընթացքին պարտադրութիւններու տակ օտարներուն շնորհուած էին: Անոնք հակառակ այս առաւելութիւններուն առեւտրական հրապարակին վրայ զգալի ուժ մը չկրցին ըլլալ: Սուլթանական Ֆերմանը կրնար առաւելութիւններ շնորհել, բայց ոչ՝ առեւտրական ձիրք ու յատկութիւն:

Երբ այլեւս Օսմանեան կայսրութիւնը սկսած էր յետադիմել, եւ պատերազմները փոխանակ աւար ու հարստութիւն բերելու մեծ ծախսերու դուռ կը բանային, ոչ-մահմետականին հարստութիւնը թալանելու եւ հրապարակը թրքացնելու գաղափարը դարձաւ պետական քաղաքականութիւն:

Առաջին Աշխարհամարտը Թուրքին առեւտրական հրապարակը ազգայնացնելու, Փոքր Ասիան ոչ-մահմետական տարրերէն մաքրելու, յատկապէս արեւելեան նահանգներու մէջ մեծամասնութիւն

Շար.ը էջ 17



A.A.A. INSURANCE SERVICES
Commercial
Auto
Fire
Life
Health
1975-2005
30th ANNIVERSARY
E-mail: BMaronian@AOL.com

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



**ՇԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՒ ՕԾՈՒՄ
ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ
ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆ ԵՒ ՎԱՋԳԵՆ ԳԱԼԹԱԷԺԵԱՆ
ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻՆ**



Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան նորած Ս. Կարապետ եկեղեցւոյ խորանիմ առջեւ, շրջապատուած եկեղեցականներով եւ դպրաց դասով

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Լուրգիանա Նահանգի Պաթոն Ռուժ քաղաքի մէջ, տեղի ունեցած է Ս. Կարապետ եկեղեցւոյ օծման արարողութիւնը: Այս առթիւ Արեւելեան Թեմի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան Կիրակի, Մայիս 14ին, պատարագած է նոր եկեղեցւոյ մէջ եւ կատարած է սրբանկարներու օծումը: Արարողութեանց մասնակցած են Հոգշ. Տ. Արարատ Ծ. Վրդ. Գալթաքճեան, Հոգշ. Տ. Առէն Վրդ. Ճէպէճեան եւ Արժ. Տ. Ներսէս Ա. Քհնյ. Ճէպէճեան: Դպրաց դասի երգչախումբը դեկավարած է Հայրենի անուանի

երաժիշտ Խորէն Մէլիանճեան: Այնուհետեւ՝ տեղի ունեցած պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի սրբատառ կոնդակը շնորհուած է Տիար Պօղոս Մուխամբեանին, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորիչ մետալով եւ յատուկ կոնդակով պարգևատրուած է Ս. Կարապետ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ՝ Տիար Վազգէն Գալթաքճեանը: Արդարեւ անոնք այս մեծ պատիւին կ'արժանանային շուրջ երկու տասնեակ տարիներու իրենց եկեղեցանուէր եւ ազգանուէր անխոնջ ծառայութիւններուն համար:

**ԱՐՓԻԱՐ ԵՒ ՇԵՐՄԻՆԷ ՃԱՆՈՅԵԱՆՆԵՐ
ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵՑԱԻ Ս. ՆԵՐՍԷՍ
ՇՆՈՐՀԱԼԻ ՄԵՏԱԼՈՎ**

Կիրակի, Մայիս 21ին, Սան Ֆերնանտո Հովիտի Ս. Պետրոս Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի ընթացքին թեմիս բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ պարգևատրումի արարողութիւն: Մասնակցութեամբ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապաղեանի եւ եկեղեցական դասուն: Արդարեւ, Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետական յատուկ կոնդակով մը Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով կը պարգևատրէր քաղաքիս ծանօթ ազգայիններէն Տէր եւ Տիկ. Արփիար եւ Հերմինէ Ճանոյեանները: Անոնք այս պարգևին կ'արժանանային աւելի քան քառորդ դար Մայր Աթոռ Ս.

էջմիածնին եւ զաղութիս տարբեր հաստատութիւններուն ընձեռած բազմապիսի ծառայութիւններուն համար: Իր հերթին՝ Յովնան Սրբազան եւս բարձր գնահատեց ճանոյեան ամոլին եկեղեցանուէր եւ ազգանուէր աշխատանքները եւ ըսաւ թէ արժանի էին այս յարգանքին ու աւելի եռանդով պիտի փարին իրենց գործին:

Այնուհետեւ եկեղեցւոյ կից Գարակէօզեան սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ սեղան ընդունելութիւն մը, ուր գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Խօսք առին Տիկին Ֆլորա Տունայեանց եւ ընտանիքի անդամները:

Հանդիպման աւարտին շնորհակալական խօսքերով հանդէս եկան Արփիար եւ Հերմինէ Ճանոյեանները:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680
(626) 398-0506**

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT
EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW

**CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641**

910 E. MAIN ALHAMBRA, CA

ENJOY THE FOOD
ALONG WITH THE LIVE MUSIC

**NAZO, VARTAN, AMIR &
SINGER MUHAMMAD**

BELLY DANCING

ՊՈԼՍԱԿԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՐԱԿԵՐՈՎ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՓՈՔՐ ԲԵՄ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ՅԱԶՈՂ ԵՐԵԿՈՆ



Դերասանները ելույթի աւարտին

ՄԱՐԻԷթ ՄԻՆԱՍԵԱՆ

Թատրոնը ծնունդ առած է առասպելի եւ ծիսականութենէ: Նախնական ժամանակաշրջաններուն, մարդիկ ծիսակատարութիւններ կը կատարէին որոնք կը փառաւորէին գերբնական ուժերը, յաղթանակներն ու հերոսները: Թատրոնը կ'ընդգրկէ մասնաշատուկ տեղ մը մեր հայ մշակոյթին մէջ: Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայ Առաք. Եկեղեցւոյ «Փոքր Բեմ» թատերախումբը բեմադրիչ Տին Սիրարփի Աճէմեանի ղեկավարութեամբ յաճախ կը շրջի երկրէ-երկիր, ուր անոնք կը ստանան դրական քննադատութիւններ: «Փոքր Բեմ» թատերախումբին սիրտն ու հոգին վաստակաւոր բեմադրիչ-դերասանուհի Տին Սիրարփի Աճէմեանն է:

Ուրբաթ, Մարտ 31 եւ Շաբաթ եւ Կիրակի, Ապրիլ 1 եւ 2, 2006ին, ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի «Աղաճանեան» սրահը լեցուն էր թատերասէր հանրութիւնով որոնք եկած էին վայելելու վերոյիշեալ թատերախումբին ներկայացուցած հուշակաւոր երգիծանկարիչ Ալեքսանտր Մարուխանի «Մենք Հայերէն Չենք Գիտեր» ծիծաղաշարժ կատակերգութիւնը: Բացման խօսքով հանդէս եկաւ Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի Ատենապետ՝ Տքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհաւորեց թատերախումբի ղեկավար Տին Սիրարփի Աճէմեանի իր թատերական գործունէութեանց 60ամեակը, ապա թուեց թատերախումբին անդամները եւ Յանձնախումբին անունով շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն Պոլսահայ Միութեան բոլոր ձեռնարկները քաջալերած ըլլալուն համար:

Դերասանները ներկայացուցին կատակերգական պատկերներ ուր թէեւ կը շեշտուէր անգլերէն գրականութիւնը որ անգլերէն լեզուին ամենագեղեցիկ արտայայտութիւններէն մին է, սակայն մեր ազգի հոգին մեր լեզուին մէջ է որ պէտք է տեսնենք զոր եթէ լաւ չսորվինք՝ մենք պակաս կը զգանք ինքզինքնիս: Պէտք է թող տրուի որ մեր հայոց լեզուն եւ մշակոյթը նահանջէ մանաւանդ հայոց արժէքներուն իմացումը մեր նոր

սերունդին եւ հայեցի ուսման եւ կրթութեան անհրաժեշտութիւնը, պէտք է հայ լեզուն եւ մշակոյթը

կան պարտատէր է, նրան կործանած դարը՝ պարտապան: Այո, իրաւայաջողը, նոր սերունդը գլուխ կը խոնարհի նրանց վիթխարի, գրական, համամարդկային ժառանգութեան առաջ, բայց ոչ թէ գլխիկոր թշուառութեամբ - այլ հպարտ յարգանքով: Շատերը դասական ու դասագրքային արժէքներ են այսօր, մոռանալ նրանց, կը նշանակէ ուրանալ: Եւ այս անմոռանալի պարտականութեան ճանապարհին է յայտնուել տեսակաւոր համբերութեամբ գինուած, շնորհալի արձակագիր Կիմա Կիրակոսեանը (Կ. Արմէն): «Ուզում էի երեխայ ունենալ» խորագրով ժամանակակից վիպակը հեղինակի ծաւալուն առաջնեկն է, մինչ այս լույս են տեսել մի շարք պատմութեանքներ, թարգմանութիւններ: 120 էջում շուրջ 25 մեծ ու փոքր կերպարներ կան, որոնցից առանձնանում են Նառան, Արթուրը, Արեւելու տատը, Սահակեանը, Արսէնը, Շողիկը, Արտակը: Այս ամենայաջող կերպար-բնավորութիւնները վկայում են, որ վիպակը հեղինակային առաջընթաց է, ձեռքբերում: Իսկապէս մի նոր սկիզբ է, որ սնուելով ոչ հեռաւոր անցեալից, իմաստաւորում է բոլորի ներկան, որ փրկի նաեւ ապագան: Օրինակ Արսէնը չկայ վիպակում: Միայն անունն է եւ հեռախօսագրոյցը, որ փաստում է նրա ժամանումը՝ Արթուրի սեմնահեղուկի սրուակով, հանգուցային մի անուն է նա եւ յիշուող: Մաքրավելու յայտնի տեսութեանն ապաւինած հերոսուհի Նառան ինքն է ընտրում միջոցները, որոնք ուղղակի տանում են դէպի նպատակը՝ երեխայ ունենալ Արթուրից, չքայքայելով նրա ընտանիքը: Գրական, հեղինակային նպատակաւարութիւնը բաց է անում մայրութեան բերկրանքի դռները: Նառան երջանիկ է, որ թէկուզ արհեստական բեղմնաւորմամբ, մայր է դառնալու: Սակայն Նառայի մահով վիպակը ձեռք է բերում նորածնի լաւատեսական լուրը: Անուղղակի կերպով ծանրացնելով հայրենաբաղձութեան նժարը, երեխայի հայրութիւնը խոստովանում է Արթուրը եւ տանում նրան: Նշենք, որ վիպակի միակ արհեստականութիւնը բեղմնաւորման փաստն է: Մնացեալը գրուած է քնարական արձակին յատուկ արտայայտամիջոցներով, գուսպ, պատկերաւոր, համեստ ընհանրացումներով, ազգային, քաղաքական, հասարակական, ընկերակրական անշարժ շարժարով: Յաջող մեկնարկը թելադրում է նոյնքան յաջող մի աւարտ: Երեխային հայրենիք փոխադրելու փաստը յուշում է Կիմա Կիրակոսեանի հայրենասիրութեան, հայրենաբաղձութեան կարօտախտի անլուր գոլութիւնը: Ապերջնող չիշողութեան ծնունդ է վիպակը: Անբարոյականութիւն այստեղ չկայ, ինչպիսին կար, ասենք, Հերովդէսի օրօք, երբ նա միտումնաւոր կերպով, հակառակ տիրող բարքերին, ամուսնացաւ եղբոր կնոջ հետ՝ մահամերձ եղբոր ատելութիւն քարոզող աչքերի առաջ... ուժեղ բախումներ չկան վիպակում: Ժանեակագործութեան մանրամասներով են հիւսուած վիպաշարի բոլոր դրուագները: Երեք ժամանակների միաձուլութեամբ վիպակը կտրում առանձնանում է՝ պատկանելով այդ երեք ժամանակներին միաժամանակ: Բառախաղ ստացուեց: Բայց

ՄԱՅՐԻԿԻՍ ՍԻՐՏԸ ԱՐՄԵՆՈՒԿԻ ՊՈՅԱՄԵԱՆ

Գարնան քնքուշ ծաղիկների այն
Բացուեցիք եւ շուտ փակուեցիք,
Անժամանակ դուք հեռացաք
Այս գեղեցիկ աշխարհից:

Արդեօ՞ք գիտեք թէ որքան շատ Տառապեց մայրս անգին,
Իսկ մենք արդեօ՞ք ճիշդ հասկացանք
Նրա վիշտը դառնագին:

Բայց էութեամբ նա զուարթ էր
Վիշտն ուզում էր թաքցնել,
Որ ոչ մէկին չվշտացնի
Ինքը հալուի իրենց մէջ:

Մայրիկիս սիրտը ովկիանի
Գնան
Ալեկոծուում էր վշտից
չափազանց,
Քարացած սրտով եւ մաշուած
հոգով
Հառաչում էր նա ամէն մի
վայրկեան:

Եւ այդպէս էլ նա հեռացաւ
Ամուր սեղմած ձեզ կրծքին,
Եւ այս ցաւոտ, ցաւ աշխարհից
Գնաց խռով, դառնագին:

ԱՅՊ ԳԻՇԵՐ (ՕՐԱՆԱԽԻ ԱՐՎԱԾԻՑ ԶՈՒՈՒԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ) ԹԱՄԱՐԱ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Սիրտս լացեց, հոգիս տխրեց
Արիւտիքից գիշերուայ,
Ամէն մի հայ արցունք թափեց այդ գիշեր
Արցունքներն այդ վարդեր դարձան
Ու թափուեցին ծովի վրայ, Սեւ ծովի,
Որ զարդարեն անմեղ մարդկանց շիրիմները այդ գիշեր:

Ամէն մի հայ մի մոմ վառեց այդ գիշեր,
Ամմար մոմեր, որ պիտ ծխան շատ-շատերի
Սրտի խորքում դեռ երկար,
Ախ, Տէր Աստուած, ինչո՞ւ չօգնիր, չփրկեցիր
Մեծ աղետից գիշերուայ
Դու իմ ազգի անմեղ մարդկանց այդ գիշեր:

այսպիսին է վիպակը: Այն լեցուն է նաեւ բանաստեղծական արձակի իւրաքանչեւութեամբ, պատկերաւոր մտածողութեան թափանցիկութեամբ, ոչ ոք չի մոռացում ընթերցելուց յետոյ: Ի հարկէ, ոչինչ էլ չի մոռացում: Ամէն ոք եւ ամէն ինչ հաշուարկման է ենթարկած: Բլրորոն իրենց տեղում են, անքակտելիօրէն շաղկապուած: Նառայի մահ փաստը լաւագոյն ծածկոցն է արհեստական բեղմնաւորման լուրը բողբոջելու համար: Եթէ չհաշ-

ուենք Երեւանից սեմնասրուակը
Լոս Անճելոս բերող Արթուրի ընկերոջ՝ Արսէնի հանգամանքը, որ կերպուի ու չի ասի, չի բացայայտի, կը պահի գաղտնիք: Կը մնայ բժիշկը, որ երդուած է արդէն Հիպոկրատով: Ուրեմն սիրոյ յաղթանակն անխուսափելի է: Սա է հիմնական գեղարուեստական արժանիքը: Դասական սիրոյ օրինակը կիրառելով, Կիմա Կիրակոսեան

Շար.ք էջ 18

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ՊՈԿՏ. ԱԼՖՐԷՂ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՈՋԵՌՆ ԲԱՌԱՐԱՆԸ | **ENGLISH-ARMENIAN COMPREHENSIVE MEDICAL DICTIONARY**

Շուրջ 500 էջեր եւ 8,500 բժշկական, գիտական, առողջադաշտական բառեր եւ բացատրութիւններ
դարունակող այս գործածական եւ խիստ օգտակար բառարանը, ամէն հայ ընթանի՞ր դարձի ունենալ:

Գին՝ \$20.00

Կը վաճառուի գրասրահներ Պերճ (818) 244-3830, Ադրիլ (818) 243-4112, Սարդարադաս (818) 500-0790 եւ «Երեւան» տպարան (818) 246-2070

Կարելի է դիմել նաեւ հեղինակին, հեռախօսելով (818) 543-7584

ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ...

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակում և նախորդ թիվում)

Ստեփան Շահումեանն է դեկավարել Մոսկվայի Մոսկովա թաղամասի ինտելեկտուալ ճանաչողական շրջանում, որից յետոյ դարձեալ ընտրուել է նոյն սովետի ժողովրդական կոմիտեի նախագահ եւ արտաքին գործերի կոմիտեի թրքական բանակներն էին արշաւում դէպի Պաքո՝ իրենց ցնորածին փանթուրքական իտէլաները իրականացնելու: Յեղակից թաթարները ցնծում էին, Ստեփանը ու մասնաւորապէս սովետի հայ կոմիտեի կազմակերպել էին քաղաքի ու հայերի պաշտպանութիւնը, միայն հայերից կազմուած զօրքն էր դիմագրաւել թուրքի յարձակումը, կատաղի մարտեր էին մղուել քաղաքի մատոցներում, հայերի պաշտպանութեան համար նաեւ այնտեղ էր իր գնդով հասել արեւմտահայ հայրենակալներէրից Համազասպը ու այդ ասեղ կռիւներում գոհուել: Ստեփանի գլխաւորած սովետի պատուիրակների, նոյն թուում եւ դաշնակցական պատուիրակները, մեծամասնութեան քուէարկութեամբ որոշում էր ընդունուել Պաքո հրաւիրել Անգլիական բանակը: Սովետի 26 կոմիտարները, մեծամասնութեամբ հայեր, Ստեփանի գլխաւորութեամբ ձեռքարկուել էին եւ Անգլիացիները ու էսերները կողմից մահապատժի ենթարկուել Անգլիական աւազուտներում: Վկայում են, որ առաջարկուած է եղել կոմիտարներին փոխանակել, սակայն կեղծոյնից ուշ արձագանգելու հետեւանքով մահապատժի էին ենթարկուել: Ափսոս այս հակա հային, դեռ քառասուն արշաւայտներ չողջունած, իր ազգին դեռ օգուտ չտուած, պատմութեան նոր թատերաբեմ ելած գաղափարախօսութեան համար նահատակուեց: Սակայն հայերը՝ Ստեփանին, Միասնիկեանին, Գայրիօշակեանին, Անաստասին պահեցին իրենց հողին ու ներքին նրանց:

Արձանի ետին զբօսայգի է, որի կողքերից այն գրկում են «Նալբանդեան» ու «Վազգէն Սարգիսեան» փողոցները: Կարմիր կատարներով հովանոցներ ու նրանց շուրջ-բոլորը աթոռներ, վաճառում են ում խելքը ինչ փշի, այլանդակ երաժշտութիւնը լռեցրել է ծառերի սաղարթների մէջէն սակայն երգը: Այս հայերը հիմա չեն ունկնդրում նրանց տիեզերական պատգամները, քրմեր չկան որպէսզի կարողանան թարգման լինեն իրենց նախնիների հեթանոս աստուածների խօսքին, իսկ առեւտարականները կարող են: Վաճառել են զբօսայգիների տարածքները, վաճառում են «ինչ որ պատահի», հապա մեր երկիրը «բարի լոյս» ի նոր կանչերով ժամանողներին բաժին չեն թողնելու արդօք: Այստեղից են սկսում յորդել երկու հազար եօթ հարիւր շատրուանները, որոնց դէպի երկիրք ժայթքելով՝ հայոց ոստանի նոյնքան տարիների Արգիշտի արքայի ողջոյնն են աւետում անցորդներին:

Հայրենադարձ հայերը ժամանակին այս զբօսայգին «Լացի Պարտէզ» էին կոչել, երեւի նմանցելով Երուսաղէմի այն պարտէզին, որտեղ Քրիստոսին էին ձերբակալել: Հայրենադարձ հայեր, որոնց մի ստուար մասը եկել էին շէն քաղաքներից ու բնակավայրերից, յուսախաբ էին եղել նոր կեանքի պայմաններից, անտարբեր ընդունե-

լութիւնից, ապօրինութիւններից, անհանդուրժողականութիւնից, գատորոշութեան դրսեւորումներից, հոգեկան բազում տոււայտանքներից: Մանօթ, անծանօթ հաւաքուել էին այդտեղ, պատմել, լացել, ողբացել իրենց Սիպերիա արտորուած հարազատներին: Լացել էին որ իրենց հոգիներում ամբարուած վիշտը արցունքի շիթերի հետ դուրս յորդէր: Եւ կուսակցական բարձր ամպիտոնից Հայաստանի կուսակցապետ Գրիգոր Յարութիւնեանը խօսել էր, որ այդ «լացող հայերը», հայրենադարձները, իբր իրենց հետ բերած էին եղել երկրի գաղափարախօսութեանը խորթ ու ոչ յարիր բարբեր, նրանց իւրաքանչիւրին հետապնդել էին որպէս թաքուն այլախոհներ, նոյնիսկ որպէս օտար տէրութիւնների գործակալներ: Խեղճ հայեր, երբ Երեւանի կառամատոցում իրենց ճամպրուկները գողացնում էին, հանգիստ ասում էին «Ոչինչ, բանալիները մեզ օտո են»: Չհասկացան, մինչեւ հիմա չեն ըմբռնում, որ ներգաղթած այդ անհող, անհայրենիք, փշուր հայերը քարաւաններով եկան երկիր միայն հայրենիքի կարօտի սրտով, Հայաստան աշխարհի սիրոյ բոցավառ խարոյկը իրենց հոգիներում, իրենց ցեղին ոգու կանչով, ինչպէս հիմա դեռ տարիներ յետոյ էլ եկել են, գալիս են, իրենց աշխարհի կարօտի ճամբաներով քայլելու, ալեհեր հոգիս նրա Չերմութեամբ այրելու: Այս զբօսայգուց էլ փախայ...:

Ինքնաշարժը հեզասահ շարժուած է «Վազգէն Սարգիսեան»ի անուան փողոցով դէպի հրապարակ, հիմա «Հանրապետութեան Հրապարակ» են կոչում այն: Մտնում են հրապարակ, լայն է այն, աշխարհի չափ լայն, կարծես ոստանի սիրտը լինի այն, շրջապատուած տաճարաշէն կառուցներով: Արեւն էր կանգնել նրա վրայ, լոյս էր ցանում նրան բոլորած կոթոնների, այլուում էին նրանց վարդացած դէմքերը: Խնդրեցի Գրիշային պտտել, պտտել հրապարակի բոլորակում, որ նրա հմայքից վարդեր ծաղկեն հոգու կարօտի ճամբաներին: Քու անարգ թշնամուն «խաղի» բերելով ողջ մնացած տարագիր հայ, հողը լքած հայ, գնա, շուտ շուտ գնա քու մայր ոստան, քայլիր հրապարակում, դոփիր երկիրը քու տես ինչպէս պիտի դողայ սիրտդ ու ինչպէս պիտի աւելի հայանաս:

Պոռթկում է միտքս, բացում է չիշողութեանս մատեանը, հաս ես Մոսկա լեռցի խորիւտ այր, տիկնոջս հետ թեւանցում, մանչերիս ձեռքերը ավերիս մէջ, հրապարակին կարմիր ու կապոյտ շաղող եասամանի փնջեր վեր պարզած տողանցում ենք հայերով լցուած այս հրապարակում, հէքիաթային գարնան Մալիսեան տօնահանդէսներ են, ուրիշ երկրի կարգերը կործանող յեղափոխութեան շքահանդէսներ, որտեղից անցնում էին ընդվզած քաղաքների ազատութիւնը փշրող հրասայլեր, ոստաններ կործանելու պատրաստ հրթիռներ: Նոր կարգերին համակերպած հայեր, կարծես ինչ որ տօնական մթնոլորտով էին համակուած, մանաւանդ որ ոչ աշխատանքային օրեր էին տրամադրած լինում: Սակայն այս, այն բոլորը, կամայ թէ ակաւայ հայոց ազգի պատմութեան մասերն, իմ ու քու կեանքի թուարթ, տիւր պատմութեան մաս: Մի փորձիր Չնջել այն չիշողութիւնից, մի քանդիր այն, բարի ու յուր իրագործումներով հանդերձ

այն արձանացած է հայոց պատմութեան երկաթագիր մատեանում, որտեղից նաեւ ժպիտ պիտի հոսայ նոր հայերի սրտերին:

Ես էլ եմ այտեղ եղել այն օրը, երբ անկախացած հայերի մայր ոստանի քաղաքապետ, մինչեւ հիմա չբացայայտուած դաւադրութեան գոհ՝ Համբարձում Գալստեանը հրամայում էր բարձր հաթակից տապալել, սպառնազին մատը դէպի անցորդ հայերը պարզած, դարի յանցագործներից՝ Ուեալով Լենինին: Դատում էին Միլոսեւիչին, տեղազին փնտռում են հայրենասէր Սերպ առաջնորդներին դատելու, բռնապետ Սատտամին ու գործակիցներին դատում են, իսկ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Հասագլի Միջազգային դատարանում, թէկուզ չես մահու, չդատէին արդեօք նաեւ նրան, որ մարդկայնութեան հանդէպ մեղանշող գալիք բռնակալներին զգուշացում լինէր: Եւ հիմա Ռուսաստանի դաշնութեան Պետական Դումայում հարց են բարձրացրել գնահատական տալու սովետների իշխանութեան ժամանակ գործուած մարդկային իրաւունքների բռնաբարման արարքներին եւ իրենց երկրին շահերին հակասող պայմանագրերին: Նա առանց դատի իր երկրի ոչ միայն թագաւորին, այլ նաեւ անգլիական թագաւորական տոհմից սերած թագուհուն, լուստո մանչերին նրանց, նոյնիսկ սպասուհի-սպասուորներին մահապատժի էին ենթարկել եւ դեռ ինչքան ազնուականների ու իմաստունների: Սակայն այդ ցարը ու ցարեր, նրա գաղափարակիցներին չէին սպաննել, բանտարկել եւ կամ պարզապէս արքայ էին, որ ժողովուրդին իրենց ժահրով չվարակէին: Ներկաների բուռն բացականչութիւններով, վզից կապուած ճոպանով վայր գլորեցին նրան եւսայլին բարձած տարան, ասում են դեռ մինչեւ հիմա այն ընկած է Պատկերապարհի շէնքի ետնամասի փակ բակում եւ գարմանալի է այդ ինչպէս է որ մինչեւ հիմա այն որպէս Չարդօն չեն ծախել իրանցիներին: Հայերը ոչ միայն նրան վռնտեցին երկրից, այլ նաեւ մետաղեայ ճոպանով պոկեցին իրենց հողից ու մի պահ օդում կախաղան բարձրացնելով դրին սայլին:

Հրապարակի եզրին, ճարտարապետական շքեղ կառոյց կար, բեմահարթակ-ամպիտոն էր այն, որտեղից շքերթները մասնակիցներին դիմաւորում էին կուսակցապետներ ու գինուորականներ: Ճակատին քանդակուած էր եղել կարմիր դրօշ: Քանդակ էին այս կառոյցը, սակայն ինչու: Ամենայնդէպս այն հին կարգերի խորհրդանշան չէր՝, բեմ էր, որտեղից կարող էին հայերին ողջունել իրենց նախա-

գահները, վարչապետները եւ սպարապետները, որոնք շքերթի էին տանելու հայոց բանակի յաղթ գինուորներին, հայոց հրասայլերին, թնդանօթներին, հրթիռներին: Թող քերէին նրա ճակատի կարմիրը եւ այնտեղ քանդակէին հայոց ծիածանափայլ դրօշը: Սակայն ասում են, որ այն քանդակ էին այնտեղի արծաթափայլ որձաքարերի սալիկներով իրենց դղեակների ներքին պատերը յարդարելու, ափսոս... արդեօք երբ պիտի «կշտանան» այս սակաւապետները:


Ինքնաշարժը կառանել էինք, գնում էինք հրապարակի ճակատի «Պլաուլակ»ներից Հայաստանի ընդերքի խորունկներից բխած սառը ջուր ըմպէինք: Ջուրն էր շատրուանում առատ, խոնարհուեցի ջրին, որին արմէն նախնիները պաշտամունք էին տաճել, իրենց սիրոյ ու գեղեցկութեան Աստղիկ դիցուհուն նուիրել էին Վարդավառեան ջրահանդէսներ, ջրուել, ջրել, իրենց հոգիները նրա տիեզերական սիրով սրբագործելու: Ըմպեցի ջուր, երկար ըմպեցի, պղք էր այն, հովանցնում էր սիրոյ կարօտը սրտիս: Շատ սակաւ երկրների քաղաքների բնակիչների տներում է միայն, որ ակունքներից բխող ջուր է հոսում: Ուրիշ բազում երկրներում ջուր են ծախում, իսկ հայոց Վանատուր հեթանոս աստուծոյ պատգամի խորհուրդով հայերը ջուր են բաշխում անցորդներին, զբօսաշրջիկները գարմանում էին:

Հրապարակի ճակատին ջրաւազանն է, նստեցին այն եզերող քարերին, ջուրն էր ժայթքում դէպի կապոյտը երկիրքի, արեւի ճառագայթներն էին սանձում նրան, որ չհասնի իրեն ու իր խարոյկը չմարի: Ով գարմանլի, ջուրն սկսեց երգել հայոց շինականների, լեռնաւանների հորովել երգերը: Շատրուաններից ժայթքած ջրերին ծիածանն էր իջել, երգերի հնչիւնների հետ ջրերը ցողուել էին կարմիր կրակով, երկնի կապոյտով, իրենց արտերում հասունացած ցորեանով: Տարագիր հայ, գնա նստիր այդ քարերին, լսիր երգող ջրերի համանուագը, լսիր քեզ կանչող շատրուանների ողջոյնը, գնա քաղիր ծիածանը նրա, այն փոխը քու մանչերի սրտերին ու նրանց վերադարձի ճամբաներին:

Հայ աշխարհում չիք նման հրապարակ, Նաւասարդի տօներին իմ մանչերի հետ քայլել եմ նրա ձիւնոտ երեսին, մանչերս, եղեւնի տօնածառն են գրկել, ձմեռ պապիկի ձիւնաքանդակ են բարձրացել, արջուկներին փառել, պտտել հէքիաթային կրպակները շուրջը: Տարագիր հայ, երբ մանչերիդ հետ Նաւասարդը պիտի տօնախմբես

Շարք. էջ 18

[Http://www.massisweekly.com](http://www.massisweekly.com)



HARUT DER-TAVITIAN
License #0828270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

Tel: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՅՈՒՇԵՐ ԴԵՊՔԵՐ ԵՒ ԴԵՄՔԵՐ ԻՄ ԿԵԱՆՔՈՒՄ

ԱԻՅՏԻՄՆԱԶԱՐԵԱՆ

Առաջին անգամ Հայաստան մեկնեցի 1993 թվականին, Թուրքիայից դեպի Կարս սահմանային քաղաքը, որտեղից մինչև Գիւմրի 20 քիլոմետր է: Գիւմրին առաջին հայկական քաղաքն էր որ հասանք: Երկաթուղու բոլոր ճամբորդները հայեր էին: Նրանք Հայաստանից գնացել էին Թուրքիա, գանազան ապրանքներ տանելու Հայաստան, վաճառելու համար: Երկաթուղու ճանապարհի երկու կողմերը անմշակ դաշտեր էին:

Մտածում էի եթէ այս խոպան դաշտերը մշակուեն եւ ցորեն ցանուեն, երկիրը կ'ապահովուի ամբողջ տարին, հացահատիկի տեսակետից: Գիւմրուայ ժամը եօթին հասանք Գիւմրի: Ինձ հետ շատ բեռներ էի վերցրել, որոնց մէջ կային փոքրիկ վառարաններ, ճրագներ, որոնք ենթակալ էին կոտորելու եւ փճանալու:

Բեռները լանձնեցի կայարանի պահեստայնոսին եւ մտածեցի գիւշերը լուսացնելու աղտեղ, որովհետեւ տեղում որոնց ծանօթ եւ օգնող չունէի: Երազում էի ժամ առաջ տեսնել Հայաստանը, շրջել ամէնուր, հանդիպել իմ ծանօթներին եւ բարեկամներին:

Այս մտքերով էի տարուած, երբ մէկը մօտեցաւ եւ հարցրեց - ո՞ւր պիտի գնաք: Պատասխանեցի - էջմիածին, սպասում ենք մեր հարազատներին: Մէկ ուրիշը մօտեցաւ եւ իմ անունը տուեց:

- Վայ, սա քրոջս տղան՝ Տ. Գուրգէնն է, - ուրախացած կանչեց կինս: Նա 1946 թվականին Իրանից հայրենադարձուած հայերից էր: Ծամպրուկները միւս կապոցները իյարգանս Տէր Հօր, չստուգեցին ու մենք դուրս եկանք կայարանից եւ մեքենաներով մեկնեցինք դէպի էջմիածին: Դիմաւորողները բոլորն էլ անծանօթ էին մեզ: Շատ ուրախ էինք: Դժուար ու ծանր ճամբորդութիւնից յետոյ մեզ գտանք մեր հարազատների մէջ: Տ. Գուրգէնից ի հարկէ նամակներ ստանում էի, բայց միւսներէն չէի ճանաչում, Տ. Գուրգէնը բաժակ բարձրացրեց եւ ասաց. «Ես միշտ աղօթում էի որ մի օր հանդիպենք իրար: Այսօր այդ երջանիկ օրն է: Տէր Գուրգէնը վանքերից մէկի վանահայրն էր: Շաբաթ եւ Կիրակի օրերին 8-10 ուխտարներ էին մատաղ անում, ապա մատաղի մի մասը ուղարկում էին տները, մի մասն էլ վանքի խոհանոցում եփում եւ բաժանում էին: 1993 թվական երկրում պնեգիւնի հարցը շատ դժուար էր: Թիթեղէ ամաններով գաղտնի, Վրաստանից պենզին էին բերում եւ շատ թանկ արժէքով վաճառում մարդկանց: Տէր Հօր հետ միշտ խօսում էինք երկրի տնտեսական ծանր վիճակի մասին: Ես այն կարծիքին էի որ ժողովուրդը չի աշխատում, չի զբաղում վար ու ցանքով: Եթէ բոլորը մի կերպ աշխատեց եւ օգնեն, երկիրը դուրս կը գայ այս տագնապից:

Գիւղերի փողոցներում տասնեակի տղամարդիկ պատերի տակ նստած, նարտի էին խաղում ու գրուցում:

Այդ մարդկանց մեծ տոկոսը աշխատունակ էր եւ սերմացու ունենալու դէպքում կարող էր աշխատել: Այսօր նոյն իրավիճակն է այստեղ՝ Ամերիկայում: Իրան եղած տարիներին, ակամատես էի որ մինչեւսիկ 80 տարեկան տղամարդիկ դաշտերում աշխատում էին: Մինչդեռ այստեղ պետական թոշակ են ստանում եւ

ժամանակ են կորցնում, առանց որեւէ օգտակար աշխատանք կատարելու: Նոյն տարին գնացի մեր մի բարեկամի տունը, Հրազդան գիւղում: Տնամերձ այգում լուրիկ էին աճեցնում: 2005 թվականից այցելեցի նրանց: Հինգ եղբայներ էին: Պետութիւնը հող էր տուել, մշակում եւ ապրում էին: Ընդհանուր առմամբ ժողովրդի վիճակը աւելի լաւ էր, 1993ի համեմատութեամբ: Գազ եւ քարիւղ կար, էլեքտրականութիւն կար, ժողովուրդը մասամբ հանգիստ կեանք ունէր: Մեր պարտքն է բոլոր միջոցներով օգնել մայր հայրենիքին, որ ոտքի կանգնի: Չէ՞ որ մենք շրջապատուած ենք թշնամիներով: Առիթ չպիտի տանք թշնամուն, մեզ աւելի ճնշելու եւ սեղմելու:

ԱՆՄԵՂ ՁՈՂԸ

Սեղրակ Աղաքեան անունով մի հողագործ մարդ սպանուեց 1952 թվականին Քալաւա գիւղում: Ոճիրը կատարուեց հանգուցեալի տան մէջ, գիւշերուայ ժամը 12ին: Այդ օրերին Քալաւան գիւղապետ չունէր: Շրջանի գիւղացիութիւնը գիտէր որ մեր գիւղատէր Սփանդարին խիստ լարուած է հայերի հանդէպ: Այդ տարիներին գիւղացիների մէջ ծայր առած որոշ քաղաքական համոզումներ, մտահոգում եւ զայրացում էին բոլոր հարուստ գիւղատէրներին: Ոչ ոքի համար պարզ չէին Սեղրակ Աղաքեանի սպանութեան դրդապատճառները: Ժանտարմական գիւղ կեդրոնը աշխատում էր գտնել ոճրագործին: Տողերիս գրողին չնայած գիւղապետ չէի այլեւս, բայց դիմեցին, խղերով իմ օգնութիւնը, քանի որ գիւղապետ Հախուերդի Մինասեանը չէր կարող հարցին լուծում գտնել: Ժանտարմների քննութիւնները շարունակուած էին: Քալաւա գիւղից երկու քիլոմետր հեռու վաչրում ժանտարմները ձերբակալեցին Ալիաբատ հայաբնակ գիւղում վրաններ ունէին, եւ զբաղուած էին մանր առևտրով: Ես պնդում էի որ նրանք անմեղ են եւ յիշուի դատարանը նրանց ազատ արձակեց: Քանի օրեր անց, լսեցինք որ գողերը եկել են Ջաւայի շրջանից դէպի մեր գիւղը Քալաւա: Գտնուած Աստանէ շրջանը: Թանկարժէք իրեղէնները գողանալով բերում են մեր գիւղը եւ թաքցնում կալերում դաշտի դարմանի դէզերի մէջ:

Յաջորդ օրը գիւղացիներից մէկը առանց եղելութիւնը իմանալու, կալերի դարմանները խուրձերով փոխադրում է իր մարագը: Գողերը այդ իմանալով հսկում են աչալուրը որ իրենց գողացած ապրանքները չյախոնաբերուեն գիւղացիների կողմից: Կէս գիւշերին գողերը սխալմամբ մտն ուն են Սեղրակ Աղաքեանի տունը: Տանտիկինը իմանալով վախեցած դուրս է գալիս եւ գիւշերուայ խաւարի մէջ օգնութիւն է կանչում: Աղմուկ-աղաղակի հետեւանքով վեր է կենում տարաբախտ Սեղրակը եւ դիմաւորում է աւազակներին: Նրանցից մէկը ասորճանակի 2 գնդակ է պարպում հայ գիւղացու վրայ, եւ պատճառ դառնում նրա մահուան: Կարճ ժամանակ անց Սեղրակի կինը իր երեխաներով փոխադրուած է Թեհրան, իսկ մարդասպան գողերը դատապարտուած են բանտարկութեան: Պարսիկ հարեւանները պատմում էին որ մարդասպանների հարազատները երբ այցելում էին բանտ, նրանք ափսոսում էին անմեղ հայ գիւղացու նահատակութիւնը, որովհետեւ գո-

ԱՅՏԱ ՊԱԶԱՐԵԱՆ



Խ.Մ. Այտա Պազարեան՝ (Տօքթ. Անահիտ Պէրպէրեան-Պազարեանի մայրը) կոտտացող սրտի խօսքը կ'ուղղէ իր գաւկի անժամանակ, անարդար կորստեան համար: Ան ուսանողական տարիներին իսկ սկսած է մրոտումներ ընել (չափածոյ-արձակ) թէ Անգլերէնով, թէ մայրենի լեզուով: Ապա Հայաստան ներգաղթելէ ետք, հայ մտաւորականութեան հետ շփումները իրեն առաջնորդած են Հայաստանի հայաստանի Պետական Հրատարակչութիւն) որտեղ կը հրատարակուէին Անգլիական եւ այլ դասական թարգմանութիւններ, եւ հայրենի գրողներու արձակ ու չափածոյ ստեղծագործութիւններ: Տիկ. Արտա Պէրպէրեան ինքզինք շատ բախտաւոր կը զգայ որ այդ արուեստի ու գրականութեան կաճառէն ներս կարողացած է իր համետ բաժինը բերել թարգմանութիւններով անմահ Ուիլիըմ Սարոյանէն (Papa your crazy) եւ այլն, Տիքընզէն (Oliver Twist) գլուխ գործոցը եւ այլն եւ Hemingway:

Իսկ այժմ գրեթէ երեք տասնեակ տարիներ Գանատայի բնակիչ ըլլալով շարունակած է իր գրական աւօրեան աշխատակցելով Մոնթրէալ հրատարակուող Ապագայ եւ Հորիզոն շաբաթաթերթերուն գրաքննադատական յօդուածներով:

Անճման աղջիկս,
Աւելի քան երկու տասնեակ տարիներ առաջ Արժանքին ստեղծագործած սոյն տողերը կարծես քեզի համար գրած են...
1978 թուականին լոյս տեսաւ Պոսթոն հրատարակուող Պայքար շաբաթաթերթին մէջ: Տուեալ ժամանակ Գանատան դեռ մամուլ չուներ: Ապրեցար սխրանքներով լի կատնք մը, եւ Աստուծոյ ողորմածութեամբ, մնացած տարիները կ'ապրիս խաղաղութեամբ, անցեալի յաջողութիւններու քաղցր յիշատակներու վերակոչումով:
Ափսոս, հազար ափսոր, որ ամենայն բարեմաղթութիւն յօդս ցնդեցաւ, եւ դուն այլեւս չկաս...
Սրտաբեկ մամադ՝
Արտա Պէրպէրեան

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Անցեալի կապոյտ մշուշին մէջէն, Ծփացող անո՛ւշ, թախծոտ երագներ,
Որ մարմին չառած ծուլուցեցար անհուն երկնի կապոյտին,
Եւ դուք պատանութեան օրեր ուկեփայլ,
Ինչո՞ւ յոյգերուն մեր հոգեհմայ Չտուիք աւիշ, չտուիք աւիւն,
Այլ գերթ ասուպի որ սոսկ մէկ վայրկեան
Շողով լուսափիւռ կը լուսազարդ գմբէթն կրկինքին
Յուսկ յետոյ, աւաղ, գահավիժելով անդունդը խորին,
Սահեցաք դուք ալ տանելով ձեզ հետ թրթռն մեր սրտի,
Երգերն քաղցրաթով, անուրջներն անգին:

դացուած ապրանքները ուրիշ անձի մարագումն էր: Այս դէպքը բացառիկ եւ դժբախտ պատահար էր մեր շրջանում: Նման ցաւալի դէպքերէք չէր պատահել եւ չպատահեց մեր գաւառում: Հայ գիւղացիները

Սեր հոգիներու ճախրանքն սրընթաց,
Ինչո՞ւ դանդաղեց, ինչո՞ւ երեւոյց,
Արշալոյսները այն բոսորագոյն ինչո՞ւ գորշացան,
Եւ ամպերն աշնան ինչո՞ւ լեռնացան
Սեր անամպ հոգու երկինքի վրայ:
Այս բոլոր հարցերն ինչո՞ւ իմ անգին,
Չէ՞ որ մէկ է միշտ իմաստն անիմաստ ահեղ այս կեանքին,
Չէ՞ որ եկած ենք մեկնելու համար,
Ծնած ենք, աւաղ, մեռնելու համար:

Բայց եթէ տուի գէթ մէկ կայծ սրտիդ բոցակէզ հուրէն,
Եւ եթէ հոգիդ ցայտեց գէթ մէկ շիթ իր անեղծ, մաքուր զգացումներէն,
Եւ եթէ միտքդ պատռելով գլխուդ կեղեւ ու պատեան
Դուրս ժայթքեց գէթ մէկ գաղափար պայծառ,
Որն լուսաւորեց մութին մէջ ահով խարխափող սրտին վիհն անդնդախոր
Գիտցիր որ կեանքդ չէ եղած երբեք զուր ու անիմաստ,
Եւ կեանքիդ մատեանն դուն կրնաս փակել հանգիստ, անվրդով, Քանգի դուն ալ քու լումաղ ես տուած,
Լումաղ հազուադուր, կեանքին հոգեթով...

տարիներ ապրեցին գիւղերում հանգիստ եւ ապահով, առանց ցաւալի միջոցառելի: Իրանի կառավարութեան ներկաչացուցիչները եւ ժանտարդները միշտ պաշտպանում էին հայ գիւղացիներին:

ԽԱՉԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ (ՇՐԱՇՔԸ)

**ԳՐԵՑ ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԱՐՄԿԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝
ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ**

Իրան-իրաք ու թամբեայ աւե-
րիչ պատերազմը շարունակուե-
լ էր, որքան կեանքեր, որքան երի-
տասարդներ պատերազմ հրահրող-
ների յայտնի եւ անյայտ հրահրող-
ների խարդախութեան գոհ գնացին,
երկուստէք բազում երիտասարդ-
ներ անտեղի եւ աննպատակ մահա-
բեր գնդակի թիրախ դարձան: Քաղաքները աւերեց, ժողովրդի
զանազանները ի շահ գինամթեր-
քի գործարանների բարգաւաճման
եւ նրանց տէրերի գրպանի ուռ-
ճացման դատարկուեց ու ոչնչացաւ
ժողովրդի հարստութիւնն ու ու-
նեցուածքը:

Իրանում եւ իրաքում երբ
երկու մահմեդատական երկիր յա-
նուն Իսլամի անխնայ ջախջախում
էին միմիանց, կային նաեւ կրօնա-
կան փոքրամասնութիւններ, որ
պատրաստ էին իրենց հիւրընկալ
երկիրը կեանքի գնով պաշտպանեն:
Այդ փոքրամասնութիւններն ակա-
մայ մասնակից էին ստեղծած տա-
ռապանքին եւ իրենց բաժին կուռող-
ներ եւ գոհուողներ ունէին:

Կուռի չորրորդ թէ հինգե-
րորդ տարին էր որ Թեհրանն ու
միւս կեդրոնական քաղաքներն էլ
արդէն իրաքի օդուժի հրթիռների
թիրախ էին դարձել: Օր ու գիշեր
հնչում էր զգուշացման ահազանգը
Թեհրանի եւ շրջակայ տարբեր
քաղաքներում պայթում էին մա-
հաբեր հրթիռները՝ սպանուած էին
մարդիկ եւ հիմնայատակ լինում
բնակարաններ: Յարձակումները
դադարեցուց յետոյ ռադիօ եւ թե-
լեվիզիոնը պատերազմական մարշ
էին հնչեցնում ու ցուցադրում էին
ստեղծուած աւերակներն ու հա-
ւաքուած հանդիսատես ամբօխը,
բարձրագոյ լողուններով յայտա-
բարում էին որ բոլորը պատրաստ
են գոհուելու, երբեմն էլ գտնուած
էին մայրեր որոնք յայտարարում
էին՝ երանի տասը գաւակներ
ունենային եւ բոլորն էլ Իսլամի
ճանապարհին գոհուէին: Որով հրահ-
րում էին երկու մահմեդական ժո-
ղովրդներին էլ աւելի կատաղու-
թեամբ միմիանցից գոհեր խլելու:

Ի դէպ դրանց մէջ կային նաեւ
կրօնական փոքրամասնութիւննե-
րից՝ գրադաշտական, հրեայ, քրիս-
տոնեայ հայ եւ ասորի, որից հայ
գոհուածները համեմատական թւով
ամէնից շատ էին:

Թեհրանի հիւանդանոցները
լիքն էին վիրաւորներով, արձակ
օրերը մեծ մասամբ մարդկանց մօտ
սովորոյթ էր դարձել վիրաւոր
գինուորներին այցի գնալ: Մի գի-
նուորականի հետ ծանօթացայ որին
յաճախ այցելում էի, ապաքինուե-
լուց յետոյ եւս մեր մտերմութիւնը
շարունակուեց: Նա օրինակելի գի-
նուորական էր, մշտական ճակատա-
մարտի առաջին գծում էր գտնուած:
Նրա ասելով երեք տարի շարունակ
կուռի առաջին ճակատում էր յե-
տոյ կորցնելով իր լսողութիւնը եւ
վնասուած քներ ստանալով ճակատ
մեկնելուց ազատել էին, բայց նա
մնացել էր այնտեղ զբաղուելով
կողմնակի օժանդակող գործերով:
Այնքան էր մեր մտերմութիւնը
ամրացել որ առնուազն ամիսը մի
քանի անգամ հանդիպում էինք,
պատմում էր շատ զարմանահրաշ-
դէպքերից հետաքրքիր դրուագ-
ներ:

Չատկուայ տօների աւթիւ նա

այցելեց մեզ, եւ պատմեց հետեւեա-
լը: Անցեալ տարի երբ դեռ ճակա-
տում էի մի իրաքցի հայ վիրաւոր
գինուոր գերի ընկաւ մի իրանցի
հայ գինուորի միջոցով եւ յանձնեց
հիւանդանոցին: Իրանցի հայ գի-
նուորին որի անունը Սարօ էր
անձամբ ճանաչում էի, հարցրի
«Ի՞նչպէս ազգակցիդ գերի վերց-
րիր որ չսպանեց»: Սարօն քաջ եւ
ճարակի տղայ էր, անգամներ կուռի
մէջ աչքի էր ընկել իր քաջու-
թեամբ, ասաց «Պըն. Կապիտան
Աստուծով 15 օր յետոյ երբ գինուո-
րական ծառայութիւնս վերջանայ,
Թեհրանում ձեզ կը ներկայանամ եւ
դէպքը կը պատմեմ» եւ էլ ընդու-
նեցի:

Գարնանը որ Թեհրան եկայ
նոյնպէս Չատիկ էր, չիշեցի Սարօ-
յին: Հեռաձայնեցի որոշուեց գիշե-
րով գնամ որ ծնողներին էլ հանդի-
պեմ: Փոքրիկ նուէր գնեցի ու
գնացի:

Ծնողներից բացի ոչ ոք տան
չէր: Խօսեցին սովորական բանե-
րից, ծնողները փառք տուին Աստ-
ծուն որ իրենց որդին ողջ-առողջ
տուն էր դարձել, ինձ էլ շնորհակա-
լութիւն յայտնեցին, որ այդ ըն-
թացքում օժանդակել եմ Սարօյին
ու ստացայ թանկարժէք մի նուէր
որ իսկապէս ինձ համար շատ
թանկագին չիշատակ է: Ընթրիքից
յետոյ վերջիշեցինք մեր միատեղ
յուշերը երբ Սարօյի հետ առանձ-
նացանք հարցրեց «Պըն. Կապիտան
Սարօյին, այն իրաքցի հայ գինուո-
րին որտեղ ուղարկեցիք»:

Պատասխանեցի «ողարկեցի
Թեհրան որ հայ ու ասորի գերիներ-
րի յատուկ բանտում պահուի, այս
էլ բանտի հասցէն է»:

Սարոն ասաց «ինչ լաւ, Ս.
Սարգիս եկեղեցու քահանաներից
մէկը վաղը մի խմբի հետ գնալու
են հայ գերիների համար Չատկ-
ուայ կրօնական արարողութիւն մա-
տուցեն, եթէ իրաւունք տրուի եւ էլ
հետները կը գնամ»: (Բ այց այդ
իրաւունքը նրան չտրուեց): Յետոյ
այսպէս պատմեց եղբւրթիւնը, որը
ինձ համար շատ զարմանալի էր,
մինչ եւ այն մտքին էի թէ ինչ
զարմանալի եւ անբեւեակայելի
դիպուածով եւ ինչո՞ւ երկու հայ
անմեղ գինուորներ ի գուր պէտք է
իրար սպաննէին, Սարոն աւելցրեց
որ գինուորական ծառայութեան
վկայագիրն ստանալուց յետոյ ու-
սումը շարունակելու նպատակով
արտասահման պիտի գնայ: Հրա-
ժեշտ տալով նրանց ցանկացայ
առողջութիւն եւ յաջողութիւն:

Դէպի տուն դարձի ճանապար-
հին մտածում էի Սարօյի հոգեկան
վիճակի մասին այդ հանդիպման
պահին եւ ինչ յարմար անուն էր
ընտրել «Խաչի հրաշքը» Սարօյի
ստոյգ մահից փրկուելու առնչու-
թեամբ: Սարոն բռնեց իր ճամբան
ու գնաց Եւրոպայ:

Չինուորական ընկերս այսպէս
շարունակեց, Սարօյի պատմածը:

Երեկոյեան որպէս պահակ
հսկում էի, երկիրքը տխուր ամպա-
մած էր, մենակ էի ու սրտնեղուած,
մտաբերում էի առաւօտեան գոհ-
ուած սիրելի ընկերներին, յան-
կարծ աչքիս մի շուք երեւաց,
նկատեցի իրաքցի գինուորէր, կրա-
կելու հնար չկար յարձակուեցինք,
հրացանի կոթով ամուր խփեցի
նրա բազկին, կորցրեց հաւասա-
րակութիւնը, երեքայն, երեքայն
նիվար գետին տապալուեց, հենց
այն է ուզում էի «գործը» վերջաց-
նել, յանկարծ ոսկեայ շղթայով մի

խաչ փայլեց գետնի վրայ: Հրա-
ցանս վիրաւորել էր նրա մէջքը
որից պատռուել եւ արիւնոտել էր
գինուորական համազգեստը, ան-
միջապէս կուացայ հայերէնով հարց-
րի՝ հա՞յ ես, ասաց՝ «այո», վեր կաց
ասացի, ու շղթան ու խաչը տուեցի
իրեն եւ որպէս պատերազմի գերի
տարայ ուղղակի ճակատի հիւան-
դանոցը: Հայերէն մի քանի նախա-
դասութիւն փոխանակեցինք, իրար
ներեցինք այս ակամայ թշնաման-
քի համար: Այսպիսով Սարօն
փրկուեց ստոյգ մահից եւ ես ազատ-
ուեցի ազգակցիս սպանութեան հո-
գեցունց ցաւից:

Ութամեայ իրաք-իրան պա-
տերազմը վերջացաւ, որի անջնջե-
լի ազդեցութիւնը մնաց հակառա-
կորդ երկրներում եւ բազմաթիւ
դաւուր յուշերի մէջ մնաց եւ այս
մէկը:

Ամերիկա ճամբորդութիւննե-
րից մէկի ընթացքում մասնակցեցի
մի հաւաքոյթի որտեղ գրուցում
էինք դեսից-դենից: Ծանօթացայ
մի իրաքահայի հետ որը այդ
ութամեայ պատերազմին ապրում
էր իրաքում: Նրա ներկայութիւնը
դրդեց ինձ պատմելու Սարօյի եւ
Սարգի անհաւատալի հեքիաթը:
Նա ասաց ուզում եմ պատմել
անցեալ տարուայ Կլէնտէյլի Ս.
Աստուածածին եկեղեցում պատա-
հած դէպքը որին ակնատես եմ
եղել 1997 թուին: Ս. Յարութեան
տօն էր, գնացել էի եկեղեցի: Աստի-
ճանների վրայ սովորականի պէս
խճողում էր, ուշադրութիւնս գրա-
ւեց երկու երիտասարդ տղաներ 30-
32 տարեկան, որոնք անթարթ հայ-
եացքով դէմ-դիմաց գնում էին
իրար շուարած, անբարբառ ու
զարմացած: Նրանց տարօրինակ
կեցուածքը գամել էր ինձ տեղում,
ինչ ուր սպասումի մէջ էի: Յան-
կարծ բարձրաձայն իրար անուն

տալով ամուր գրկուեցին: Արտաս-
ուալից աչքերով նրանք շարունա-
կում էին մրմնջալ Սարօ, Սարօ:

Ժողովուրդը քարացած դի-
տում էր: Քարացած դիտում էր:
Քառորդ ժամ գրկուած, յուզուած
եւ անխօս վիճակից չետոյ վերջա-
պէս կարողացան խօսել եւ ամէն
բան պարզուեց բոլորի համար:
Սարոն ու Սարգն երկու հայ-
քրիստոնեայ երիտասարդներ՝ եր-
կու թշնամիներ երկու հարեւան
մահմեդական երկրներում՝ իրա-
նում եւ իրաքում ակամայ իրար
դէմ կուռի են դուրս եկել յանուն
Իսլամի, մի տխուր իրիկնամուտ
յօգուտ իրենց հիւրընկալ երկրնե-
րի, կուռի մի թէժ կիզակէտում
հանդիպում են իրար եւ ոխերիմ
թշնամիների պէս յարձակուած են
իրար՝ ոչնչացնելու նպատակով, եւ
ահա խաչի «գորութիւնը», վրայ է
հասնում ու փրկում է մէկին ստոյգ
մահից ու միւսին իր ազգակցի
սպանութեան անարգանքից, եւ այ-
սօր տարիներ յետոյ, Չատկուայ
տօնին վերադառնում ու գրկախառ-
նում են հենց եկեղեցու սուրբ
գաւթում:

Չարմանքից կորցրել էի խօ-
սելու կարողութիւնս, վայրկեան
յետոյ խօսակցիս ասացի՝ որքան
գեղեցիկ վերջ ունեցաւ այս հեքի-
աթը: Նախքան այդ յաճախ մտա-
ծում էի՝ ո՞ւր է Սարոն, Սարգն ի՞նչ
եղան: Արդօք, խաղաղ պայմաննե-
րում իրար կը հանդիպե՞ն: Այս
ինչքան լաւ հանդիպում:

Թեհրան վերադառնալուց յե-
տոյ գինուորական ընկերոջս որ
եկել էր տեսութեանս պատմեցի
Սարօյի եւ Սարգի պատահական
հանդիպումը Ամերիկայում, շատ
զարմանք պատճառեց նրան ու այդ
բարի լուրի համար յայտնեց իր
շնորհակալութիւնն ու գոհուանա-
կութիւնը:

ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՓՈՔՐ ԲԵՄ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ՅԱԶՈՂ ԵՐԵԿՈՆ

Շարունակուած էջ 8-էն

եւ գոյն կու տային բեմի մթնոլոր-
տին:

Թէեւ 11 դերասաններ խա-
ղարկեցին բեմին վրայ երեք գի-
շերներ, բայց կամաւոր անձեր ալ
օգնեցին որպէսզի յաջողի սոյն
թատերախաղը:

Թատրոնի աւարտին, բեմ
բարձրացաւ վաստակաւոր բեմադ-
րիչ՝ Տիկ. Աճէմեան շնորհակալու-
թիւն յայտնելով հանդիսատեսնե-
րուն, քուլիսներու ետին աշխատող
անձերուն եւ Պոլսահայ Միութեան
Մշակութային Յանձնախումբի
Ատենապետ՝ Տքթ. Աւետիքեանին,
Տիար Կարպիս Սարաֆեանին, որոնց
ջանքերուն շնորհիւ կրցան ժամա-
նել Լոս Անճէլըս եւ ներկայացնել
սոյն թատերգութիւնը:

Նոյն գիշեր Լոս Անճէլըսի
Պոլսահայ Միութեան Մշակութա-
յին Յանձնախումբը հրաժեշտի երե-
կոյ մը սարքեց թատերախումբի
անդամներուն, Canoga Parkի Moon-
light Sako's ծաշարանին մէջ, ներ-

կայութեամբ մօտիկ ազգականնե-
րու, հարազատներու եւ Մշակու-
թային Յանձնախումբի անդամնե-
րուն, շնորհաւորելու համար սոյն
թատերախումբին բեմադրիչ՝ Տիկ.
Սիրարփի Աճէմեանի թատերական
արուեստին 60ամեակը, ինչպէս նաեւ
գնահատելու թատերախումբի ան-
դամներուն յաջող աշխատանքը:
Այս առիթներուն համար հատուե-
ցաւ կարկանդակ մը: Սրտի խօսքը
ըրաւ Մշակութային Յանձնախում-
բի Ատենապետ՝ Տքթ. Աւետիքեան,
շնորհակալութիւն յայտնելով թա-
տերախումբին՝ ապա Յանձնախում-
բի անդամները ծանօթացուց թա-
տերախումբի անդամներուն, այս
վերջիններուն բաժնելով յուշան-
ուէրներ:

Տքթ. Աւետիքեան յաջողու-
թիւն մաղթեց բոլորին, լիայոյս
ըլլալով որ մօտ ապագային թատե-
րական նորանոր նիւթերով առիթը
ունենան դարձեալ վայելելու իրար
ներկայութիւնը:

Թատերախումբը Թորոնթո
վերադարձաւ Ապրիլ ամսուն 4ին:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Կիլիկեան Բարեգործական Միութիւնը կու գայ իր խորին
շնորհաւորութիւնները յայտնելու Ալիս Թաւուքճեանի
իրաւաբանական վկայականի ստացման եւ Քալիֆոնիոյ Bar
Քննութեանց յաջողութեան աւթիւ: Շնորհաւորութիւններ
յատկապէս իր մեծ մօր՝ Տիկ. Խօթնին, ծնողքին՝ Տէր եւ Տիկ.
Գէորգ եւ Մարալ Թաւուքճեաններուն:

Բարի երթ եւ յարաճուն վերելք կը մաղթենք Ալիս
Թաւուքճեանին:

ԹՈՒՐԲԵՐՈՒՆ՝ ԹՈՒՐԲԻԱՆ ԹՐԲԱՅՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է՝ էջ 6-էն

կազմող հայերէն ձեռքնագատուելու առիթը տուաւ:

Եղէականի շրջանին «մաքրութեան» համար կազմուեցաւ գործադիր մարմին մը, որուն անդամներէն մին իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան ներկայացուցիչ Մահմուտ ձեւլալ (Պայար)-ն էր, յառաջիկային Թուրքիոյ Հանրապետութեան երրորդ նախագահը (1950-1960): Թեշքիլաթի Մահսուսային «Teskilat-i Mahsusa - Յատուկ կազմակերպութիւն») շրջանի աւագակախումբերը 1914ի գարնան սկսան յարձակիլ յունական գիւղերու վրայ եւ շրջանը սարսափի մատնել, ստիպելով յոյները Յունաստան գաղթելու: Ըստ ձեւլալ Պայարի տեղեկութիւններուն՝ 130 հազար, ըստ իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան չորրորդ գործադիր մարդը եւ յետագային Թուրքիոյ Հանրապետութեան երեսփոխան (1931-1946) Հալիլ Մենթեշէի՝ 200 հազար յոյներ Ձմիւռնիոյ (իզմիր) շրջանէն բռնագաղթի ենթարկուած էին: Ըստ Թեշքիլաթի Մահսուսայի հրամանատարներէն էշրէֆ Քուշուպաշըի 1914ին եւ պատերազմի առաջին ամիսներուն Եգէականի ափերէն 1 միլիոն 150 հազար յոյն եւ հայ բռնագաղթի ենթարկուած էին, որոնց կէսը իրենց կեանքը կորսնցուցած էր աքսորի դառն պայմաններուն եւ ջարդի հետեւանք: Այս տուեալները համապատասխան էին ձեւլալ Պայարի հաշիւներուն, ինչպէս նաեւ անգլիական եւ ֆրանսական աղբիւրներու տուեալներուն: Երեսփոխաններու համաձայն Թրակիայէն ալ 300-500 հազար յոյներ երկրէն դուրս հանուած էին: (6):

Յոյներէն բռնագրաւուած կալուածներուն արժէքը կը հասնէր 5 միլիառ ֆրանքի, որ պետութեան այդ օրուայ ելեմտացոյցին հինգ անգամն էր:

Հայ ժողովուրդին մեծամասնութիւնը Արեւմտեան Հայաստան՝ Օսմանեան կայսրութեան Փոքր Ասիոյ արեւելեան վեց նահանգներուն մէջ կը բնակէր: Բնականաբար հայ դրամագլուխին ծանրութիւնն ալ հոն էր: Այդ շրջանին կային 153 արդիւնաբերական հաստատութիւններ, որոնցմէ 3-ը օտարներուն, 20-ը թուրքերուն եւ 130-ն ալ հայերուն կը պատկանէր: Մօտաւորապէս 10 հազար վաճառատուններուն 2500-ը թուրքերուն, 7000ն ալ հայերուն էր: Կային 5 թուրք ու 32 սեղանաւորներ (սարրաֆ): (7)

Ինչպէս որ առեւտրական կեանքը փայլուն վիճակ մը ունէր, նոյնպէս էր նաեւ կրթական կեանքը: Ըստ ռուսական «Նովոյէ Վրեմիա» («Նոր ժամանակներ») թերթին, կային 785 հայկական դպրոցներ՝ 82 հազար աշակերտութեամբ: Թուրքերը ունէին 150 դպրոց՝ 17 հազար աշակերտով: (8)

Ըստ Կ. Պոլսոյ պատրիարքութեան, 1903ին, իր իշխանութեան սահմաններէն ներս գտնուող գաւառներուն մէջ կային 818 դպրոցներ՝ 82,695 երկսեռ աշակերտներով եւ 2,153 ուսուցիչ-ուսուցչուհիներով:

Պատերազմական վիճակէն նախ իթթիհատի անդամները օգտուեցան: Յորենի առեւտուրը «իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութեան ակնաւոր չարահայտներուն ձեռքը անցած էր: ... Ժողովուրդին սնունդը կը գողցուէր: ... Այս նորելուկ գողերու խմբակին չարաչառութիւն-



Սրբապղծուած Յունական եկեղեցի

ները հրեաներու՝ այս նշանաւոր վաշխաւորներու կողմէ կը ղեկավարուէր: Ամէն ինչ, փոխադրութեան միջոցներն ալ կը շահագործուէին: Առանց իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութեան պաշտպանութեան՝ գործ տեսնել, ապրիլ, անկարելի դարձած էր»: (9)

Իթթիհատականներու այս գործունէութիւնը 1909ի Սելանիկի համաժողովին մէջ առնուած որոշումներուն կիրարկումն էր: «Իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութիւնը իրականին մէջ Օսմանեան կայսրութիւնը քանդելու նպատակով «Սիոնիստ» հրեաներուն տաղանդէն ծնած էր: Իրենց այս նպատակը 1909ին Սելանիկի մէջ գումարուած համաժողովին մէջ նախապէս Սելանիկի կեդրոնը կառավարող անձնաւորութիւններու միջեւ որոշելով՝ գործադրութեան համար երդում տուած էին:

Որոշումները հետեւեալ չորս կէտերու մէջ ամփոփուած են.

Ա. Յետ այսու Թուրքիոյ մէջ կրօնքի ազդեցութիւնը բեկանելու:

Բ. Թուրքիոյ հարստութեան աղբիւրները ընկերներու մէջ բաժնել:

Գ. Մարգարէին փոխանորդութիւնը իշխանութենէն զատելով տկարացնել:

Դ. Առիթը ներկայանալուն միապետութիւնը տապալել եւ հանրապետութիւն հռչակել»: (10)

Թուրքիոյ Հանրապետութեան առաջին նախագահը՝ Ղազի Մուսթաֆա Քեմալ, 1927ին, Հանրապետական ժողովրդական կուսակցութեան «ձումհուրիյէթ Հալք Փարթիսի (CHP)» շրջ համաժողովին կու տայ վեց օր տեւողութեամբ ձառ մը, ուր ան, ի միջի այլոց, կ'ըսէ. «Բոլոր այս դէպքերուն, Թուրքիոյ Ազգ. մեծ ժողովին, պետութեան նախագահի, ընդ. հրամանատարի եւ հանրապետութեան նախագահի տիտղոսները ստանալէ առաջ, մեր «գաղնտի» կազմակերպութեան նախագահի հանգամանքով՝ այս պարտականութիւնը կատարելու ստիպուած էի»: (11)

Այդ օրերուն հրատարակուող «Միլլիյէթ» թերթին մէջ լոյս կը տեսնէ Աղա Օղլու Ահմէտի ստորագրած մէկ յօդուածը, ուր ան կը գրէ. «Այս գործերուն կատարումը անգամ մըն ալ կը հաստատուի, որ մեր լեղափոխութեան ընթացքը շատ առաջ մշակուած ծրագրով մը նախատեսուած էր: Այդ ծրագրին հետզհետէ գործադրութիւնը այս անգամ իր ամենակարեւոր հանգրուանը կը բոլորէր»: (12)

Օսմանեան կայսրութեան՝ Առաջին Աշխարհամարտի մաս-

նակցութեամբը կանխամտածուած աքսորը ու ջարդը գործադրութեան դրուեցաւ:

Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութիւնը 1913-1914ի «մաքրագործում»ը յաջողութեամբ գործադրելէ ետք, 1915ին յաւելեալ վայրագութեամբ սկսաւ հայկական նահանգներուն մէջ հայոց աքսորին, ջարդին: Աքսորեալներուն բոլոր ստացուածքները, յառաջիկային վերադարձուելու խոստումով, մի առ մի արձանագրուեցաւ: Կարաւաններուն մեկնումէն ետք անոնց կալուածները շրջանի թուրքերն ու քրիստոնէր բռնագրաւեցին: Անոնք, տեղական պաշտօնատարներու մեղսակցութեամբ, մաս մը կալուածագրութիւններու մէջ կալուածատիրոջ անունի փոփոխութիւններ կատարեցին: Իրենք սեփականատէր դարձան: Կառավարութիւնն ալ տարբեր վայրերէ բերուած գաղթականները հայերէ պարպուած տուններու մէջ տեղադրեց: Աքսորի ճամբուն վրայ Թեշքիլաթի Մահսուսայի աւագակախումբերը պաշտպանութեան մեղքը մարդոց վրայ յարձակեցան, գանոնք ջարդեցին, անոնց վրայի դրամը ու գարգեղէնները գողցան: Աքսորականներու երկիր վերադարձը արգելուեցաւ: Մուտրոսի

գինադադարէն (30 Հոկտեմբեր 1918- ետք աքսորեալներէն վերադարձողներ եղան: Հայերուն եւ յոյներուն վերադարձին ու իրենց ստացուածքին տէր կանգնելուն արգելք ըլլալու համար կազմուեցաւ «Քուվվայի Միլլիյէթ Թեշքիլաթի» կազմակերպութիւնը (Kuvva-i Milliye Teskilati):

Աքսոր եւ ջարդ գործադրուած վայրերու կառավարիչները վարձատրուեցան: Անոնց աւելի բարձր պաշտօններ տրուեցան: Թաւաթի աներձագը՝ Ապտիւլհայիք (Ռենտա), ջարդի միջոցին Պիթլիսի կառավարիչն էր, իսկ Ձմիւռնիոյ հրկիզման ու թալանին ալ՝ Ձմիւռնիոյ: Ան հանրապետութեան շրջանին եղաւ տնտեսական, կրթական եւ պաշտպանութեան նախարար: Աւելի ետք նշանակուեցաւ Ազգային ժողովի՝ խորհրդարանի նախագահ, եւ շնորհիւ այդ պաշտօնին Աթաթուրքի մահէն մինչեւ իսմէթ Ինէճուիկի նախագահ ընտրուելը՝ երեք օր հանրապետութեան նախագահի տեղակալ եղաւ: Այն պաշտօնեաները որոնք խուսափեցան մասնակից ըլլալէ ջարդերուն՝ պատժուեցան, նոյնիսկ մահուան դատապարտուեան:

(Շարունակելի 1)

1. «Էրմենիլեր վէ Իթթիհատ վէ Թերաքքի-Իշպրիլիդիմտէն Զաքըրմայա» (Հայերը ու Իթթիհատ եւ Թերաքքի-Համագործակցութեան Բախում), Արսէն Աւագեան, Արաս հրատարակչութիւն, Իսթանպուլ, 2005, էջ 89, 90, 91:
2. «Օսմանեան Յեղափոխութեան Մութ Մայրերը», Մեվլան Զատէ Ռիֆաթ, Տոնիկեան հրատարակչութիւն, Գ. Տպագրութիւն, Պէլրուք, 1975, էջ 97, 98: «Թիւրքիյէ Իմֆրլայրմըն Իչ Եիլգի», Մեվլան Զատէ Ռիֆաթ, Ծնար Եայնլարը, Իսթանպուլ, 1993, էջ 108: (Գիրքը առաջին անգամ հրատարակուած է Հայէպի մէջ, 1929, ին, արաբական տառերով: Քիրտ ծագումով Մեվլան Զատէ Ռիֆաթ Արաթիւրիի հակառակորդ 150-ներուն մաս կը կազմէր: Մեծած է 1930ին, Հայէպ, ուր ամուսնալ կ'այրէր):
3. Նոյն - հայերէնի մէջ էջ 98, 99, իսկ թրքերէնի մէջ՝ 109:
4. Նոյն - հայերէնի մէջ էջ 99, իսկ թրքերէնի մէջ՝ 100:
5. Նոյն - հայերէնի մէջ էջ 101, իսկ թրքերէնի մէջ՝ 113: Տոնիկեան Զատէ, ճալիտ եւ Թալաթ Սելանիկի Բաղաֆի Սապերայական (հրէութեան իսլամութեան դարձածներ) համայնքին կը պատկանին:
6. «Ինսան Հազարը վէ Էրմենի Սօրունու» (Մարդկային իրաւունքները եւ Հայկական Հարցը), Թանէր Ալթամ, Իմլէ Եայնլարը, 2002, էջ 191:
7. «Էրմենիլեր վէ Իթթիհատ վէ...», էջ 78:
8. Նոյն, էջ 81:
9. «Օսմանեան Յեղ. Մութ...» հայերէնի մէջ էջ 134, 135, իսկ թրքերէնի մէջ՝ 156, 157:
10. Նոյն - հայերէնի մէջ էջ 170, իսկ թրքերէնի մէջ՝ 198:
11. Նոյն - հայերէնի մէջ էջ 324:
12. Նոյն - հայերէնի մէջ էջ 324:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Սահակ Թուրքեանի
«ԱՐԵՒԸ ԼԵՌԱՆ
ԵՏԻՆ»
Հայրենական
Օրագիրը

Ստանալու համար
դիմել հեղինակին՝
Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ
գրախանութները
Կլէմտէյի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերն՝ (818) 244-3830
Սարգսրապատ՝
(818) 500-0790

ՆՈՒՐԱԿԱԼԻՔ



ԳՐԻԳՈՐ ԼԱԶԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԼԱԶԻՆԵԱՆԻ քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Մայիս 2006ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝
 Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 22 Ապրիլ, 2006, առաւօտեան ժամը 10:00ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, 2215 East Colorado Blvd.: Իսկ թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Փասատինայի Mountain View գերեզմանատան մէջ 2400 N. Fair Oaks Ave. Altadena:
 Յուզարկաւորութեան հոգեհանգստեան պաշտօնը կ'ընդունուի Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, 1060 N. Allen Ave. Pasadena:
 Սգակիրներ՝
 Այրին՝ Տիկ. Հռիփսիմէ Լաչինեան
 Զաւակները՝
 Տէր եւ Տիկ. Կարապետ եւ Սոնա Լաչինեան եւ զաւակները Սօսի եւ Գրիգոր
 Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Լուսին Լաչինեան եւ զաւակները՝ Անի եւ Դինա
 Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան եւ զաւակները՝ Սիւզըն եւ Յակոբ
 Տէր եւ Տիկ. Զօհրապ եւ Սեդա Պօղոսեան եւ զաւակները՝ Արամ եւ Յովիկ
 Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեհանգստեան պաշտօնը կ'ընդունուի Հ.Մ.Մ. «Կարօ Սողանալեան» սրահին մէջ: 1060 N. Allen Ave. Pasadena
 Հանգուցեալներուն յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՆՈՒՐԱԿԱԼԻՔ

ԳՐԻԳՈՐ ԵՒ ՖԻԼՈՍՓԻՆ ԱՐԼՃԵԱՆՆԵՐՈՒ մահուան քառասունքին առիթով եւ ՖԻԼՈՍՓԻՆ ԱՐԼՃԵԱՆԻ հոգևոյն, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Մայիս 2006ին, Cupertino-ի St. Andrew եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝
 Զաւակները՝
 Հրաչ եւ Մարալ Արըճեան եւ զաւակները Կասիա եւ Գօգօ
 Յակոբ եւ Վանիա Արըճեան եւ զաւակները Արտա եւ Սիլվա
 Ռիթա եւ Ադամ Գապայանեան եւ զաւակները Անտրէա եւ Ալեքս
 եւ համայն հարազատները:
 Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեհանգստեան պաշտօնը կ'ընդունուի սրահին մէջ:
 Հանգուցեալներուն յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԵՒ ՖԻԼՈՍՓԻՆ ԱՐԼՃԵԱՆՆԵՐՈՒ մահուան տխուր առիթով Կիլիկեան Բարեգործական Միութիւնը կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալներու զաւակներուն եւ բոլոր հարազատներուն:

ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԼԱԶԻՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կիլիկեան Բարեգործական Միութիւնը կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի աշխիւն, զաւակներուն եւ բոլոր հարազատներուն:

ՌԻՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով **G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

ՆՈՒՐԱԿԱԼԻՔ

ԳՐԻԳՈՐ ԵՒ ՖԻԼՈՍՓԻՆ ԱՐԼՃԵԱՆՆԵՐՈՒ մահուան տխուր առիթով հանգուցեալներուն ընտանիքն ու հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Արժ. Տ. Շնորհք Քհնյ. Տէմիրճեանին, Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Երէցեանին, ազգականներուն, հարազատներուն, ընկերներուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, գրութեամբ, հեռաձայնով, ծաղկեղսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին:

Այս տխուր առիթու փոխան ծաղկեղսակի Հալէպի Կիլիկեան Բարեգործական Միութեան վարժարանի ֆոնտին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար Լոս Անճելոսի Կիլիկեան Բարեգործական Միութեան վարչութիւնը եւ վարժարանի տնօրէնութիւնը իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն:

- Տէր եւ Տիկ. Ադամ եւ Ռիթա Քապլանեան \$1,000
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Վանիա Արըճեան \$600
- Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարալ Արաճեան \$400
- ձոն Ատրմ եւ Շարոն Էնն \$400
- Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Սօսի Համալեան \$300
- Տէր եւ Տիկ. Անդրանիկ եւ Սեդա Պաղտասարեան \$300
- Տիրար Յարութ Տէր Ղազարեան \$250
- Տէր եւ Տիկ. Ժան եւ Սոնա Ապտօ \$200
- Անահիտ Էյնկիւմըն \$200
- Տէր եւ Տիկ. Ուիլմ եւ Սեդա Հանտ \$200
- Տէր եւ Տիկ. Պաշիկ եւ Վերա Տէր Գասպար \$200
- Տէր եւ Տիկ. Վահէ եւ Ռոզէթ Էքմէքճեան \$200
- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Զեփիլո Միքայէլեան \$200
- Տէր եւ Տիկ. Գըրք եւ Վերա Գասպարեան \$200
- Տիրար Սարգիս Արտճեան \$200
- Լուսին Գարամանուկեան \$200
- ձորճ Սուֆի եւ ընտանիք \$200
- Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Սիլվա Կիրակոսեան \$200
- Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Սոնիա Գաբրիէլեան \$200
- Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Արփի Գասպարեան \$200
- Տէր եւ Տիկ. Արմէն եւ Անի Աքեան \$200
- Տէր եւ Տիկ. Կէթա եւ Արաքսի Եթէնէքեան \$200
- Տէր եւ Տիկ. Գառնիկ եւ Սիլվա Միքայէլեան \$200
- Սանտրա, ձայէ եւ Քէրըն Ռոպինսըն \$200
- Միքայէլեան ընտանիք \$200
- Օհանեան ընտանիք \$150
- Սիրարփի Ասարեան \$120
- Անթուանէթ Պէրէճիքլեան \$100
- Վիզէն Կարապետեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարանդ եւ Սօսի Զինչինեան \$100
- Նանիք Ուլուպէքեան \$100
- Տէր եւ Տիկ. Սեւան եւ Զեփիլո Եաքինեան \$100
- Ռոզ Քասիմեան \$100
- Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Անահիտ Աթէշեան \$100
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նազիկ Զէյթունեան \$100
- Վեհանուշ Զանթուրեան եւ ընտանիք \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Մանուէլեան \$100
- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Անի Մահաբէճեան \$100
- Տօքթ. Միքայէլ Արսլանեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ֆիմի Զէրունեան \$100
- Տէր եւ Տիկ. Հրայր եւ Գոհար ձերմակեան \$100
- Նազելի Տէր Վարդանեան \$100
- Գարատեան ընտանիք \$100
- Մանինօ Անթուանէթ եւ Քնութ Մէրի ձօ \$100
- Տէր եւ Տիկ. Երուանդ եւ Ռիթա Զօրեան \$100
- Տէր եւ Տիկ. Միքայէլ եւ Վիքթորիա Քամբոս \$100
- Տէր եւ Տիկ. ձէրալտ եւ Հարիէթ Ուիլիք \$100
- Սօսի եւ Զարուհի Արոյեան \$100
- Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարօ Տէր Ղազարեան \$90
- Ասողիկ Կէօզիլպէօյիւքեան \$80
- Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Ռոզին Աթաշեան \$80
- Տէր եւ Տիկ. Մարտիկ եւ Էօթէնի Արոյեան \$50
- Տէր եւ Տիկ. Օհաննէս եւ Սօսի Հանէսեան \$50
- Նազարէթ եւ Ռաֆֆի Գեւորեան \$50
- Տէր եւ Տիկ. Նշան եւ Շաքէ Օհանեան \$50
- Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Մանուշակ Եկէնեան \$50
- Տէր եւ Տիկ. Նազար եւ Մէրի Արաճեան \$50
- Տէր եւ Տիկ. ձորճ եւ Հէնրիէթ Թարգեան \$50
- Տէր եւ Տիկ. ձըրմըն եւ Մարիալ Կոնզալէս \$50
- Մի ոմն \$50
- Տէր եւ Տիկ. Վարուժ եւ Ատրիան Իակճեան \$40
- Madison Faculty Association \$40
- Սարգիս Քարքարեան \$35
- Լուսի Թօփրաքճեան \$25

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ»
ՇԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ՔՐԵՄԵՆԹԱ)
 ԳԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.*



Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը կը յայտարարէ հարիւրամեակի Կալա-ճաշկերոյթ, տօնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պանծալի տարեդարձը:

ՀԲԸՍ ԸԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ- ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՆԱԽԱԳԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ՌԻՉԸՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍ՝ ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿԵԱՆ

ՆԱԽԱԳԱՐ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍԱԿԱՐՆԵՐ՝

ԷՐԻՔ ԿԱՐՍԵԹԹԻ

ԹՈՐՈՍ ԵԹԵՆԵՔԵԱՆ

ՆԱԽԱԳԱՐ ԼՈՍ ԱՆՃԷԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Հ.Բ.Ը.Ս. ՀԱՐԱԽԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՅՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԻՍ 17, 2006

Universal Hilton Hotel Պանդոկին մէջ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել ՀԲԸՍ-ի գրասենեակը՝
(626) 794-7942 կամ գրել՝ annette@agbuca.org

ԿԻՊՐՈՍԻ 100-Կ-ՊՇԵՂ